

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բ Ա Լ Ա Յ Ա Ն Զ Ի Ն Ա Ի Դ Ա Վ Ա Ն Ի Ի

ԱՐՑԱԽԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ժ. 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական խորհրդատու՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Ներսեսի Սարինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիմիր Աղասու Կիրակոսյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարգեւի Մուրադյան

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սուկրատ Աղալարի Խանյան

Առաջատար կազմակերպություն՝

Երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 3-ին, ժամը 13. 30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող Հայ եւ արտասահմանյան գրականության մասնագիտական խորհրդում :

Հասցեն՝ 375015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում :

Սեղմագիրն առաքված է 2016 թ. ապրիլի 26-ին :

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու

Ս. Ա. Մարգարյան

ԱՅԵՆԱ ԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ատենախոսությունը **առաջին գրականագիտական փորձն է՝ XIX դարի հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա վեր հանելու, մեկնաբանելու եւ արժեւորելու արցախյան թեման՝ XVII-XIX դդ. պատմական իրադարձությունների ընդհանուր համապատկերի մեջ:**

Հայոց Արցախ աշխարհի պատմությունը սկիզբ է առնում հնագույն դարերից եւ անքակտելի մասն է հայոց՝ իբրեւ պետական, քաղաքական, էթնիկ, կրոնական եւ մշակութային ընդհանրության պատմության: Ազգային ինքնության գիտակցում ձեռք բերելով Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած դպրոցներում՝ Արցախը հետագա դարերում եւս մասն է կազմել հայոց մշակույթի՝ առնչվելով նաեւ Բագրատունիների, Կիլիկիայի հայկական թագավորության եւ պատմական այլ ժամանակների մշակութային արժեքներին:

Եւ, այնուամենայնիվ, Արցախը որպես պատմաաշխարհագրական սուբյեկտ, հայ մշակույթում եւ գրականության մեջ թեւ կար դեռ միջնադարից, սակայն նորովի հայտնագործվում է XIX դարում: Պատահական չէ, որ Մուրացանն ու Րաֆֆին Արցախի վերաբերյալ ասում են, թե դա մի մոռացված ու անհայտ մնացած աշխարհ է եւ նրա պատմության ուսումնասիրությունը չափազանց կարեւոր է, առհասարակ հայոց պատմության, մանավանդ վերջին դարերի գիտական իմացության տեսակետից: Այս հարցի լուսաբանությանն է նվիրված սույն՝ «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ատենախոսությունը:

Թեմայի շրջանակները բավական լայն են ու գրեթե անընդգրկելի, ուստի մենք, որպես խնդրի լուսաբանության առաջին փորձ նախընտրել ենք առանցքային այն հուշարձանները, որոնք առավել խորությամբ են ներկայացնում Արցախի պատմությունն ու բնաաշխարհագրական պատկերը:

Այսպես Արցախը գրական հոլովույթի մեջ է առնվում XIX դարակագրից:

XIX դարի Արցախի մշակույթի մեջ իր ժանրատեսակներով, ծրագրային ուղղվածությամբ, սուր, տարաբնույթ հարցերի վերհանումով առանձնանում եւ առաջնային տեղ է գրավում գրականությունը, որի թեմատիկ տարբերակումներն ամբողջանում են ազգային-ազատագրական պայքարի արտացոլումով, ազգային գաղափարախոսության շերտերը ներկայացնող երկերի ստեղծմամբ, ազգային մտասեւեռումների գաղափարից ծնվող գրական գործերի հրատարակմամբ, գյուղն ու գյուղացիությանը լուսավորելու, կրթելու, տգիտությունը հալածելու առաջադրվող ծրագրայնությամբ, այդ ազգային կառույցում Շուշին որպես մշակութային, լուսավորության կենտրոն ներկայացնելով, հատկապես այն անթաքույց երեւում է Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհի» երկում, ապա՝ պատմական անցյալի իրադարձությունների, պատմական կերպարների վիպականացմամբ, անձնվեր հերոսների կերպավորմամբ, Արցախի պատմական, քաղաքական, կրթա-լուսավորչական կյանքի դրվագների վիպականացմամբ, հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների՝ մելիքությունների պատմական նկարագրի վերապատկերմամբ:

Անցյալի գրական ավանդները նորոգության ոգով ու մի այլ խորհուրդով շարունակվեցին՝ ասպարեզ բացելով ազգային գաղափարակառույցը մատնանշող եւ թարմ երանգ ու բովանդակություն, թեմատիկա ու զարգացում նախանշող գրական նոր անունների՝ Րաֆֆու, Մուրացանի, Ա. Բեկնազարյանի, Լեոյի, Հայկունու (Հ. Գեղամյանցի), Մ. Բարխուդարյանի երեսան գալու համար:

Ատենախոսության հետազոտության առարկան XIX դարի հայ գրականության, մասնավորապես Արցախի մասին ստեղծված գրականության պատմությունն է:

Գիտական ուսումնասիրության մեջ XIX դարի հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա առաջին անգամ փորձում ենք ներկայացնել Արցախի թեման՝ որպես առանձին դիտարկվող երեւույթ:

Այն իր ավանդութակիր շերտերն ու գրապատմական, քաղաքական, հոգեւոր եւ աշխարհիկ մշակույթի ու արվեստի ինքնատիպ վավերագրերն ունի:

Գրականության մեջ համաժամանակյա մեկնություն է այս ընթացքը. հայ ժողովուրդն իր քաղաքական ճակատագրի կորուստների ու հաղթությունների, զարմանահարաշ հանձարի ոգեղեն բեւեռացումների, հոգեւոր բարձր արժեքների, արարչագործ էության տերն է, իբրեւ սուբստանց համաաշխարհային ազգաբանության կառույցում՝ համամարդկային քաղաքակրթության արշալույսից սկսած իր հոգեւոր արարումներով կանգնել է քաղաքակիրթ ազգերի առաջին շարքում:

Ժամանակների հոսքում Արատտա-Կուտի-Հայասա հինավուրց երկրի՝ Հայոց աշխարհի հզոր ու արարչագործ տիրակալները, հայ ժողովուրդը ստեղծել են հարուստ դիցարան՝ որպես աշխարհաճանաչողության ինքնատիպ տեսակ, գիր, դպրություն՝ աշխարհի հետ հաղորդակցվելով տարաբնույթ հարաբերություններով, իսկ աշխարհի ամենահնագույն գրավոր մատյանում՝ «Գիլգամեշ»-ում (մ.թ.ա. 5-4 հազարամյակ), մեր երկիրը շումերներից ու աքքադներից անվանվել է «Աննահույան» ու «Գրի երկիր», «Աստվածների ժողովի երկիր», «Սուրբ օրենքների երկիր...»:

Ապա, ժամանակ առ ժամանակ, այն դարձել է բարբարոսներին ոտնակոխ, գերվել, եղեռնվել, տարագրվել, ցրվել աշխարհի չորս ծագերը, ճակատագրին ընդդիմանալով՝ դիմակայել, արարել աստվածաշնորհ ոգեղենությամբ, բացել անհայտի փակագծերը, ստեղծել գրականության, գիտության, արվեստի անկրկնելի գոհարներ ու հանձարեղ կոթողներ, ներկայացրել աշխարհին բացառիկ երեւույթներ:

Պատմական Հայաստանի 10-րդ նահանգ Արեւելից Կողմանքը՝ Արցախը, իր անկրկնելիությամբ մի անգամ չէ, որ զարմացրել, հիացրել, առիքնել է՝ հարեւան ժողովուրդներին եւ հեռավոր օտարներին:

Հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում գրական, պատմական երկերի, մշակութային կոթողների, քաջագործությունների հեղինակ են եղել նրա զավակները, ցույց տվել աշխարհին արցախցու ֆենոմենալ կերպարը, զարմանահրաշ մտախառնվածքը, արարելու հզոր տենչը, հարատեւելու անկոտրում կամքը, ամուր ու խրոխտ քայլքը՝ ժամանակի հետ, ժամանակին ընդառաջ:

Անդրկովկասի մշակութային կյանքի ու լուսավորության կենտրոններից XIX դարակզբին Շուշին էր: Շուշին իր դպրոցներով, տպարաններով, իր նկարագրով՝ բարքերով, նիստ ու կացով, շահիրար-բանաստեղծներով, մտրուպ-գովասաններով՝ գուսաններով, մշակույթի գործիչներով մտավոր կյանքի տաք, անհանգիստ զարկերակն է Ղարաբաղի: Թատրոնի, թարգմանական արվեստի հարուստ ավանդներ ունեցող հայ ժողովրդի արցախական հատվածում դա մի նոր երանգ է ստացել:

Ընթերցասեր արցախցին ոչ միայն ռուս գրականության մեծերի՝ Պուշկինի, Լերմոնտովի, Բելինսկու, Գոգոլի, Նեկրասովի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու, Տոլստոյի, Չեխովի, Գորկու, այլև եվրոպական դասականների՝ Հայնեի, Գյոթեի, Բայրոնի, Շիլլերի, Հիպոլիտ Թենի երկերից շատերը, որոնք թարգմանվում էին Շուշիում, յուրացրեց ու ընդլայնեց իր մտավոր տեսադաշտը:

Գրականության, պատմության, մշակույթի ասպարեզում ստեղծվել են նաեւ արժեքներ, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով մերժվելով՝ խորհելու, քննելու, վերագնահատելու տեղիք են տալիս:

Այդ քայլն անշուշտ պետք է կատարվի՝ նոր հայացք ձգելով գրականագիտական սկզբունքներին, մոտեցումներին, գոյություն ունեցող կարծրատիպերին, որոնք խոչընդոտել ու խոչընդոտում են մշակույթի արժեքների ճիշտ եւ անաչառ, գիտական գնահատությանը:

Գրականության ու գեղարվեստի փիլիսոփայությունը, ազգային գաղափարախոսությունը, հոգեւոր արարումների ոչ մի հյուլե չկորցնելու գիտակցումը այդ են պահանջում:

Երբեք էլ ուշ չէ կորցրած գրապատմական, մշակութային արժեքը հետ բերել, չարժեւորածն արժեւորել, մերժվածն ընդունել՝ հիմնվելով գիտական փաստարկների վրա:

Այս մտահոգությամբ էլ փորձել ենք գնահատել եւ վերաբնութագրել XIX դարի Արցախի գրականությունը եւ ոչ ճիշտ կամ թերի մեկնաբանված ու մերժված երկերը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ Արցախը հայ գրականության մեջ թեմայով չի շոշափվել ու շրջանառության մեջ չի դրվել, ընդհանրության մեջ տվյալ սկզբունքով համապատասխան քննություն չի կատարվել, ուստի այս աշխատանքում քննվող նյութը ձեռք է բերում *արդիական հնչեղություն*՝ միաժամանակ դառնալով *գիտական նորույթ*:

Պատմության առաջադրած դասերը հաճախ կանոնակարգվում են ազգային գաղափարաբանության համակարգում՝ իրենց հերթին առաջադրելով ժամանակաշրջանի հրամայականը՝ գեղարվեստի, պատմության ու գրականության փիլիսոփայության քննությունը:

Գեղարվեստական կամ պատմական երկերը իրենց մեջ ամփոփում են դարաշրջանի պատմաքաղաքական անցքերի պատկերը:

Ուսումնասիրության չորս գլուխներում ներկայացված են արցախահայության պատմության փաստագրված դրամատիկ անցքերը՝ քաղաքական ձակատագիրը, հարցապնդումները, Խամսայի մելիքությունների՝ այդ ամենում ունեցած դերը, արցախահայության ազատասիրական մղումները՝ ազգային-ազատագրական շարժումը, պայքարը, քաղաքական կողմնորոշումները, մասնավոր եւ ընդհանուր շահերը, մելիքների միջուկ տեղի ունեցող այլեայլ վեճերը, կռիվները, նրանց օտարամոլությունը, այդ ամենից օգտվող օտարների անհարկի միջամտությունները, հարեւան երկրների քաղաքական խաղերը, որոնց հետեւանքով խաղաքարտի վրա են դրվում երկրի անվտանգությունն ու անկախությունը՝ հանգեցնելով հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների կորստին:

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Խամսայի մելիքություններում քաղաքական կյանքի, տարածաշրջանում՝ աշխարհագրա-պատմական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել ցանկացող հարեւան երկրների երկդիմի խաղերի, արտաքին եւ ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը, ապա ռուսական կայսրության ենթակայության տակ հայտնված արցախահայության ազատագրական պայքարը պարսից տիրապետության դեմ, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» (Մ. Շահինյան) լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված մշակութային, գրապատմական կյանքի հարուստ նկարագիրը:

Այդքանով մի անգամ եւս ընդգծվում է ուսումնասիրության մեջ բարձրացված հարցերի կարեւորությունն ու թեմայի գործնական նշանակությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության քննության *առարկան* XIX դարի հայ գրականությունն է՝ առանձնադիտված *Արցախի թեմայով*, իսկ *նպատակն ու խնդիրն է՝* հայ գրականության ընդհանուր մակարդակի վրա քննել Արցախում ծավալված մշակութային, լուսավորական, ազգային-ազատագրական մաքառումների պատկերը, մեկնել ժամանակաշրջանի քննադատության ու պարբերական մամուլի զարգացման միտումները, ապա ցույց տալ ստեղծված երկերի ու նրանց հեղինակների հանդեպ ցուցաբերված ոչ ճիշտ վերաբերմունքը, հոգեւոր արժեքների թերի գնահատումը կամ մերժումը, որն ուղեկցվում էր հաճախ սուր բանակռիվներով, պոլեմիկայով՝ բանավեճի ժանրից պահանջվող կանոնների խախտմամբ:

Այսպիսով ուսումնասիրության **հիմնական նպատակը** փաստացի է դարձել Արցախի գրականության **բնութագրմամբ ու արժեւորմամբ XIX դարի** հայ գրականության **թեմատիկ, գաղափարական ու ոճական** ընդհանուր տարածքի մեջ:

Գրականության զարգացման ընդհանուր ֆոնին քննել ենք Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, Րաֆֆու «Խամսայի մելիքությունները», Ա. Բեկնազարյանի 130 տարի մերժումի կնիքը կրող «Գաղտնիք Ղարաբաղի»-ն, թռուցիկ կերպով՝ Մուրացյանի «Բաղտասար Մետրապոլիտ Հասան Զալալեանի համառօտ կենսագրութիւն»-ը, «Ռուզան» դրաման, «Խորհրդավոր միանձնուհին» եւ զուգահեռ՝ թեմայի հարցերին եւ խնդիրներին առնչվող Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Լեոյի «Վէ՞պ թէ պատմութիւն»-ը, Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւնն քննադատութեանց» գիրքը, Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը, որոնք վերաբերումն են կարիք ունեն:

Արվեստի երկերի վերագնահատումը համաշխարհային եւ եվրոպական գրականագիտական մտքի կարելու օղակներից է, եւ հայ գրականագիտական մտքի մեջ բացառություն չի կազմում:

Քննության ենք առել նաեւ Մ. Բարխուդարյանի արցախյան պատմությունը՝ գրապատմական երկերը, հատկապէս հնագիտական աղբյուր հանդիսացող «Արցախ» մեծարժեք աշխատությունը:

Քննությանը զուգահեռ ներկայացրել ենք նաեւ արցախահայության քաղաքական ճակատագրին վերաբերող հարցերը, նրա պայքարը արտաքին եւ ներքին թշնամիների դեմ, հարաբերությունները հարեւան երկրների հետ, ձեռքբերումներն ու կորուստները:

ԹԵՄԱՅԻ ՄԵԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախագիտական, հայագիտական առկա փորձին զուգահեռ ներկայացվող ուսումնասիրությունն իր տեսակում ամբողջության մեջ **գիտական առաջին քայլն է:**

Ուսումնասիրությանն առնչվող քննական գրականությունը քիչ է:

Առաջին գլուխը նվիրված է Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» (Մոսկվա, 1834) գրքի քննությանը, որը 1882թ. Րաֆֆին է թարգմանել ռուսերենից հայերեն եւ գրել փոքրիկ առաջաբան՝ «Թարգմանչից» խորագրով:

Առաջինը լինելով՝ հայագիտության եւ ռուսագիտության մեջ վերլուծել եւ գնահատություն ենք տվել գրքին, Պլ. Զուբովին իբրեւ ստեղծագործողի, գրողի, հետազոտողի՝ ներկայացրել պատմական, գրականագիտական, գրական լայն հղումներով: Այն հրատարակել ենք ընդհանուր խորագիր կրող «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» քննական ուսումնասիրության մեջ՝ որպէս **առաջին մաս:**

Աշխատանքի **երկրորդ գլուխը** նվիրված է Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» պատմական ուսումնասիրությանը, որի առնչությամբ մասնակի գնահատություններ են եղել Ս.Սարինյանի, Ա.Սաղաթյանի եւ այլոց կողմից: Ժամանակաշրջանի գրաքննությունը խիստ մկրատել է գրքի արժեքավոր մասերը, խոչընդոտել նրա լրիվ տպագրությանը: Այդ երեւոյթի մասին գրախոսությամբ հանդես է եկել Ա. Արփիարյանը: Ուսումնասիրությունն ամբողջությամբ **նորովի** քննել ենք **վերագնահատման մեթոդով**՝ մեկնելով Րաֆֆու այդ երկի գաղափարախոսական հիմնական ուղղվածությունը եւ նշելով Խամսայի մելիքությունների կործանման քաղաքական դրդապատճառները:

Աշխատանքի **երրորդ գլխի** առաջին մասը բաղկացած է երկու (1.Լեգենդի ծագումը եւ գրական արձագանքները, 2.Մ.Բարխուդարյանի արցախապատմումը) անդրադարձներից: XIX դարում **գրական աղմկահարույց երեւոյթ հանդիսացող պատմական ուսումնասիրության՝ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի** վերաբերյալ կարծիքներ, գրախոսություններ են տպվել պարբերական մամուլում՝ զովաբանական եւ մերժողական, ապա հրատարակվել են Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Լեոյի «Վէ՞պ թէ պատմութիւն»-ը, Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւնն քննադատութեանց» գիրքը, Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը, որում խոսվում է նաեւ Աբրահամ եւ Ապրես Բեկնազարյանների եւ նրանց հեղինակությանը 1886 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի եւ նրա արժեքավորության մասին: Հեղինակն այն համարում է **«պատմական մի անգին գիտ»**, որի սյուժեն եւ գաղափարական բովանդակությունը ներկայացնում են XVIII-XIX դարերում Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքական ծանր իրադարձությունները: Այնուամենայնիվ, երկասիրությունն ամբողջությամբ մերժվել է: Որոշ ճշտումներ կատարելով՝ փորձել ենք **վերագնահատել** այն:

Արցախագիտության մեջ **համադրական եւ աղբյուրագիտական մեթոդով** մենք առաջինն ենք այն պատմաբանասիրական քննության ենթարկում եւ վերաբերում գրականությանն ու պատմությանն համապատկերում՝ ազգային գաղափարակառուցի հիմնախնդրին զուգահեռ վերհանելով մելիքությունների պատմական առաքելությունը եւ նրանց քաղաքական ճակատագրի ծանր նկարագիրը:

Երրորդ գլխի երկրորդ մասը ներկայացնում է Մ. Բարխուդարյանի՝ Արցախի հնագիտությանն ու աշխարհագրությանը, պատմությանը վերաբերող երկերը, մանավանդ «Արցախ» պատմագիտական, երկրագիտական, աշխարհագրական, եկեղեցագիտական, տնտեսագիտական արժեքավոր երկը, որի համալրողմանի քննությանն առաջին անգամ անդրադարձել ենք մենք՝ ընդգծելով եւ բերելով փաստեր ու տեղեկություններ նոր լույսի տակ բացահայտելով մեծ գիտնականի վաստակը:

Ուսումնասիրության **չորրորդ գլուխը՝ «Գաղտնիք Ղարաբաղի»-ին պատմաբանասիրական մեկնաբանությամբ**, ներկայացնում է XIX դարի հայ գրականության աղմկահարույց գիրքը՝ ժամանակաշրջանի գրական կյանքի բազմաբնույթ քննությամբ եւ դիպաշարի, կերպարների համակարգի լուսաբանությամբ: Այն քննվում է հեղինակային բնագրի մեկնումներին զուգահեռ, որոնք հարցի վերաբերյալ ուրույն լուսամուտներ են բացում:

Թեեւ թռուցիկ, բայց, ըստ ամենայնի ամբողջությամբ, խոսվում եւ բնութագրվում է նաեւ Մուրացյանի երեք՝ «Բաղտասար Մետրապոլիտ Հասան Զալալեանի համառօտ կենսագրութիւն» պատմական ակնարկից կամ մեմուարից, որը սրբագրությունն է Աղվանից կաթողիկոսական տոհմի վերջին շառավիղ, XIX դարի առաջին կեսի

Արցախի հոգեւոր եւ մշակութային կյանքի երեւելի ներկայացուցիչ Բաղդասար Մետրոպոլիտ Հասան Զալայյանի նկարագրի, ապա «Ռուզան» դրամայից, որն անդրադարձ է XIII դարում տեղի ունեցած մոնղոլների արշավանքին, այդ ֆոնի վրա՝ Արցախի քաղաքական ծանր իրավիճակի նկարագրին, եւ վերջում՝ «Խորհրդավոր միանձնուհուց», որում մանրակերտված է XIX դարի 60- ականների սերնդի առաքելությունը եւ Շուշին՝ որպէս մշակույթի, գրականության, արվեստի, հրատարակչական, թարգմանական գործի, քաղաքական, ազատասիրական առեւտրային, պայքարի, լուսավորության, կրթության ու առաջադիմության կենտրոն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Գիտական ուսումնասիրությունը ավարտին ենք հասցրել՝ օգտագործելով **համադրական, վերլուծական, աղբյուրագիտական, հերմենեւտիկ եւ արքայադիտական ու վերարժեւորման, կառուցվածքաբանական մեթոդները**, ընդգծելով ուսումնասիրվող նյութի **տիպաբանական առանձնահատկությունները, ոճական հարցերը**:

Նյութի քննության ընթացքն ուղեկցվել է ոչ միայն XIX դարի հայ գրականության պատմության, այլեւ ռուս եւ արեւմտաեւրոպական գրականագիտական մտքի նվաճումների մեկնությամբ ու համադրմամբ, դրանց համեմատական եզրերի, գրականագիտական դպրոցների կամ ուղղությունների սկզբունքների օգտագործմամբ, նորի առաջադրմամբ, ապա եւ խոսվել է բանավեճի ժամրին պատկանող սկզբունքների մասին, որոնք կարելի էր առաջադրված հարցերին ճիշտ պատասխանելու տեսանկյունից:

Մեկնաբանությունները կատարված են ժամանակաշրջանի գրականագիտական մտքի եւ պարբերական մամուլի առաջադրած պատմագիտական, գրականագիտական քննությանը զուգահեռ:

Ներկայացված երկերի վերլուծության ընթացքում առաջնային ենք դիտել տիպաբանական սկզբունքները՝ կոնկրետ վերլուծության, ձեւի ու բովանդակության, պատմության, գրականության, գեղարվեստի փիլիսոփայության մասնագիտական արժեւորման ձեւերում:

Ուսումնասիրության ընթացքը պայմանավորված է նաեւ գեղարվեստական առանձնահատկությունների, պատմականության եւ վիպականության փոխհարաբերությունների, տիպաբանական առանձնահատկությունների, առանձնացող ոճերի (ժամանակի, անհատական, ազգային եւ այլն), ժանրային տարբերակումների, առանձնադիտումների, համաշխարհային տեսական փորձի քննությամբ:

Մեկնված են ներկայացված գրքերի դիպաշարը, գաղափարական բովանդակությունը, կերպարների համակարգը, բնաշխարհը, պատմամշակութային անդրադարձները, հեղինակների այդ եւ այլ հարցերի կապակցությամբ առաջնային դիտված նպատակները, խնդիրները, համոզմունքները:

Կարելի էր դիտարկել եւ տրված եւ մեկնաբանված ազգային գաղափարակառույցից միտված պատմական երեւոյթները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտխորհրդի 2011թ. սեպտեմբերին կայացած նիստում:

ԼՂՀ, ՀՀ, ՌԴ եւ սփյուռքի գիտական համապատասխան պարբերականներում, դոկտորական աշխատանքների համար ՀՀ ԲՈՀ-ի հաստատած հանդեսներում, գիտական տեղեկագրերում, հանրապետական եւ միջազգային գիտաժողովներում, կոնֆերանսներում հրատարակվել են ուսումնասիրության հիմնական դրույթներն արտահայտող երկու եւ կեսից ավելի տասնյակ գիտական հոդվածներ:

2004թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել գիտական ատենախոսության **առաջին զուլուխը** հանդիսացող Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպի տեսաքննական վերլուծությունը, որը «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» ուսումնասիրության առաջին մասն է: Այն հրատարակության են երաշխավորել **ԼՂՀ Կրթության, Գիտության եւ Սպորտի նախարարության կոլեգիան՝ 2003 թ. նոյեմբերի 4-ի թիվ 01-625 որոշմամբ եւ ԱրԴՀ գրականության և լրագրության ամբիոնը, բանասիրական ֆակուլտետի գիտխորհուրդը**:

2014թ. **ԼՂՀ պետպատվերով** «Ղիզակ Պլյուս» հրատարակչությունը լույս է ընծայել «Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները» (պատմաբանասիրական քննական տեսություն) մենագրությունը՝ **ԱրԴՀ գրականության և լրագրության ամբիոնի 2014թ. օգոստոսի 24-ի նիստի թիվ 1 արձանագրության որոշմամբ**:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գիտական աշխատանքը բաղկացած է **ներածությունից, չորս զուլխներից**, որոնցից **երրորդը՝ երկու մասից, վերջաբանից, եզրակացությունից** եւ **օգտագործված ու մեջբերված գրականության ցանկից**:
Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածության մեջ ներկայացված է աշխատանքի **գիտական հարցադրումը**:

Առաջադրված են **հիմնադրույթները**՝ ատենախոսության **նպատակը, խնդիրները, առարկայի եւ թեմայի բացահայտումը, քննվող օբյեկտը, վարկածը, գործնական եւ կիրառական նշանակությունը, թեմայի հրատապությունն** ու **արդիականությունը, Արցախի հայտնությունը**, որոնք **տեսականորեն քննելի** եւ

գիտականորեն ապացուցելի պարույրներ ունեն, **հայագիտական-արցախագիտական** միտքը **հարստացնող առանցքներ, գիտական նորույթներ բացահայտող երանգներ:**

Այսրկովկասում Հայաստանի, մասնավորապես Արցախի գրականության՝ քաղաքական ձակատագրի հետ կապված հարցերին վերաբերող վիպապատմական շարադրանքների, ուսումնասիրությունների քննությանն է նվիրված ատենախոսությունը, որի կառույցը դիտարկված է ներածությունում:

Ներածության մեջ **ասհմանված** եւ **որոշարկված է** հարցի **դրվածքը**, **տրված է** Արցախի պատմության ու դպրության ուրվագիծը, որը հատկանշող կողմեր ունի՝ **Արցախը** որպես **XVIII դարի հայ ազատագրական շարժման ու պայքարի հանգույց:**

Ուսումնասիրության **հիմնական նպատակն** է Արցախի գրականության **բնութագրումն** ու **արժեւորումը** XIX դարի հայ գրականության **թեմատիկ, գաղափարական** ու **ոճական** ընդհանուր տարածքի մեջ:

Բացահայտված են **տիպարանական** այն **առանձնահատկությունները**, որոնք մատնանշում են **Արցախի թեման** ամբողջացնող երակը, որում բացահայտվում են հայկական այս երկրամասի դպրության, գրականության, պատմության, մշակույթի զարգացման պարույրները, օրինաչափությունները, ինքնատիպ ու արգասաբեր դրսեւորումները:

Ներածության մեջ թուցիկ հայացքով դիտարկված է Արցախի գրականության ու պատմության ուրվագիծը XVIII դարից մինչեւ XIX դարավերջ, ներկայացված է XVIII դարի հայ ազատագրական շարժման Արցախի գրական դիմանկարը: Այդ հենքի վրա մասնավորապես դիտարկված են Իսրայել Օրու գործունեությունը, Եսայի Հասան Զալալյան կաթողիկոսի առաքելությունը, մեկնաբանված են ռուս եւ հնդկահայ ազատագրական մտքի (Հ. Էմին, Ս. Բաղրամյան, Հ. եւ Շ. Շահամիրյաններ) արծագանքները՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, բացահայտված է Շուշիի՝ որպես Արցախի ու ողջ Անդրկովկասի մշակութային, լուսավորչական, կրթական, գրական, քաղաքական կյանքի կենտրոնի համայնապատկերը:

Տրված է Արցախյան գոյապայքարի տարեգիր Բ. Ուլուբաբյանի «Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը» պատմագիտական աշխատության՝ որպես արցախագիտական մտքի արժեքավոր վավերագրի սեղմ բնութագիրը:

Այն Արցախ-Ղարաբաղի պատմությանն ու մշակույթին նվիրված մի մատյան է՝ գիտական ու տրամաբանական կուռ ամբողջությամբ եւ ամուր ողնաշարով:

Կարեւորելով Արցախի պատմության ստեղծման աշխատանքը, այն ուսումնասիրողի՝ պատմական ամեկ վավերագրերից օգտվելու «հմտությունն ու բարեխղճությունը», Բ. Ուլուբաբյանը հատկանշում է ուսումնասիրության գլխավոր պտուտակները: «Հինգերորդ դարից Մեծ Հայքի միասնական թագավորության բարձունքից հետո (428թ.) Արցախական աշխարհը դարձավ ամբողջից պոկված ու իր առանձին, հազար ու մի փորձություններ հաղթահարող միավորը: Հետագա ավելի քան մեկ ու կես հազարամյակի նրա կենսագրությունն է, որ կազմում է սույն գրքի նյութը, հիմքն ու առանցքը»¹:

Արցախի պատմության շուրջ՝ հայ եւ օտար աղբյուրների ընծեռած նյութի հիման վրա Բ. Ուլուբաբյանը տալիս է Արցախ աշխարհի պատմաքաղաքական նկարագիրը, քննում միջնադարյան Արցախ- Խաչենի պատմությունը, ներկայացնում ազգային-ազատագրական պայքարի շրջանը (XVII- XVIII դդ):

Ուսումնասիրության **առաջին՝ «Արցախյան առաջին վեպը (Պլատոն Զուբով, «Ղարաբաղի աստղագետը») գլուխը** վերաբերում է ռուս գրող Պլ. Զուբովի պատմավեպի քննությանը, որը ներկայացնում է Արցախի մեկիքների պատմությունը՝ սկսած XVIII դարի կեսերից մինչեւ XIX դարի առաջին տասնամյակները՝ 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, նրանց վարած քաղաքականությունը, այդ հողի վրա օտար կառույցի՝ Ղարաբաղի խանության ստեղծումը, մեկիքների քաղաքական ձակատագրի վայրիվերումները, վեպի կենտրոնական հերոսներից աստղագետ Հասանի հրեշավոր գուշակությունը՝ կստեղծվի Ղարաբաղի խանությունը, եւ Շուշիի տերը կլինի Ղարաբաղի նոր տիրապետողը՝ Փանահը:

Ատենախոսության կառուցվածքում հատուկ բաժին ենք հատկացրել Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպին ոչ միայն այն պատճառով, որ դա արցախյան առաջին վեպն է, Արցախի պատմության առաջին գեղարվեստական անդրադարձը, այլեւ այն հանգամանքով, որ նրանում ճշմարտացի են ներկայացվում Արցախի հայոց կենցաղն ու բարքերը, ինչպես նաեւ ժամանակի ներքաղաքական իրադարձություններն Արցախում:

«Ղարաբաղի աստղագետը» վեպի հեղինակը՝ պատմավիպասան, պատմաբան-աշխարհագրագետ, պրոֆեսոր Պլ. Զուբովը, ըստ Միք. Միանսարյանցի ներկայացրած մատենագիտական ցանկի, Անդրկովկասի պատմությանը վերաբերող մի քանի գործեր եւս ունի:

Պատմական մեկնումներ են տրված՝ կապված Արցախի մեկիքների քաղաքական, ներքին եւ արտաքին բազմաբնույթ հարաբերությունների վերհաման հետ:

«Ղարաբաղի աստղագետի» կերպարների համակարգը հետաքրքիր առանձնացումների յուրօրինակ շերտեր է բացում, որոնց ակտիվ շարադասությունը ցույց է տալիս գեղարվեստական երկի զարգացման՝ ռոմանտիկական սուբյեկտիվության հնարավոր կոնցեպցիան:

Զուբովը քննության է դնում հայ ժողովրդի վերքերը, որոնք երբեմն պարարտ ծիւր էին տալիս ու ստվեր ձգում ազգի նկարագրի վրա, շատ անգամ պատմական կյանքում դառնում կորստաբեր՝ իբրեւ հայկական իշխանությունների անկման ու կործանման միջոցներ, ցուցիչներ:

Աշխատանքի **երկրորդ՝ «Մեկիքությունների պատմական ձակատագիրը (Րաֆֆի, «Խամսայի մեկիքությունները») գլխում** մեկնաբանվում եւ արժեւորվում է Րաֆֆու «Խամսայի մեկիքությունները» պատմական ուսումնասիրությունը:

Րաֆֆու համար հարցերի հարց էր դարձել Ղարաբաղի մեկիքների պատմության վերհանումը. դա բխում էր պատմության հանդեպ նրա որդեգրած փիլիսոփայությունից: Ազգային գաղափարախոսության կոնցեպցիայի

¹Ուլուբաբյան Բ., Երկու խոսք, տե՛ս Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Երեւան, Մ. Վարանդեան, 1994, էջ 8:

այսպիսի վերանայումը առաջնակարգ հարց է. եթե ունեցել ենք քաղաքական կարգ՝ ինքնիշխանություն, ապա պետք է վերանայել արժեքները եւ վերագտնել ազգային գաղափարահիմքի բանալին՝ պետականության գաղափարը եւ նրա մարմնավորումը:

Աշխատանքում ցույց են տրված հեղինակի՝ գիրքը գրելու շարժառիթի, այդ ուղղությամբ կատարած աշխատանքի, աղբյուրների հայթայթման ու Արցախի դրամատիկական անցքերով հարուստ պատմության դրվագները մատուցած առ մասունք հավաքելու ու գրի առնելու մտահոգության պատճառները: Միաժամանակ առանձնանշված է կատարված նախնական աշխատանքը՝ մելիքական տների մասին պատմական տեղեկություններ հայթայթելը եւ արդյունքում՝ «Երկու ամիս Աղվանից աշխարհի շուրջը» քննախոսության հրատարակման գործը:

«Վերջաբան» կոչվող մասը սկսվում է հետեւյալով. «Խամսայի մելիքությունների պատմությունը վերջացավ: Երբ այդ պատմությունը մաս-մաս լույս էր տեսնում «Մշակի» համարների մեջ, ամեն անգամ, երբ հանդիպում էի ծանոթներիս, նրանց առաջին խոսքը լինում էր «լավ է...», իսկ հետո մի հարց՝ «ո՞րտեղից եք առել այդ տեղեկությունները...»: Այդ հարցի մեջ, որ ստեպ առաջարկում էին ինձ, նշմարվում էր մի տեսակ կասկած, մի տեսակ անվստահություն... Բարեկամներիցս մի քանիսը մինչեւ անգամ նկատեցին ինձ. «Մի՞թե մենք ունեցել ենք Ղարաբաղում այսպիսի իշխանություններ, եթե կային, ինչո՞ւ մենք չգիտեինք...»²:

«Վերջաբանը» հայելու նման վառ կերպով արտացոլում է Րաֆֆու տաղանդի ուժը՝ որպես պատմաբան-հետազոտողի եւ ազգային գաղափարախոսի: Նրա ոճը խիստ է, հասկանալի, համոզիչ, մեկնություններն ու ընդհանրացումները՝ ծանրակշիռ, ամբողջության մեջ՝ գիտականորեն խիստ կարեւորված ու երեւոյթները բացահայտված:

«Վերջաբան»-ում նա ներկայացրել է Խամսայի մելիքների պատմությանը վերաբերող պատմական ուսումնասիրություն գրելու իր նպատակը, գերխնդիրը, ճանապարհորդության մղվելը՝ նյութեր հայթայթելու ձգտմամբ, ձեռք բերված աղբյուրների ցուցումով, որպեսզի ապացուցի նրանց փաստացիությունը:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է՝ **«Արցախի լեզենդը (Ապրես Բեկնազարյան, «Գաղտնիք Ղարաբաղի»):**

Հայ գրականության պատմության մեջ այլեւայլ ժամանակաընթացքներում արձանագրվել են բանավիճային բնույթ կրող գրական բազմաթիվ երեւոյթներ՝ հարուցելով ժամանակի գրական շրջանակների՝ գրողների, գրաքննադատների իրարամերժ, հաճախ հակասական կարծիքները:

Նման ձևակառուցող վիճակվեց նաեւ Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքին:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է XIX դարավերջին մերժված «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությանը, որն անշուշտ ունի իր ժողովրդին ծառայելու, արցախագիտական միտքը հարստացնող վարկանիշ ձեռք բերելու իրավունք: Անցնող ժամանակների հույսը գրեթե միշտ բերում է արժեքների վերագնահատությունների: Կարծում ենք այդ ձևակառուցողը կունենա նաեւ «Գաղտնիք»-ը:

«Գաղտնիք Ղարաբաղի» պատմության նյութն ամփոփված է երկու հատորում: Գրքի փոխադրող Ս. Բարխուդարյանը նկատում է, որ աղբյուրագիտական տեսակետից ավելի բարձրը երկրորդ հատորն է, որում «ժամանակագրական կարգաւ, գեղեցիկ դասաւորուած են թէ՛ պատմական անցքերն և թէ՛ զանազան մարդիկներից գրուած բոլոր նամակներն: Իսկ առաջին հատորում ընդհակառակն է տեսնուած»³:

Ս. Բարխուդարյանը անհերքելի է համարում «Գաղտնիք»-ում ներկայացրած պատմական փաստերը հայ-ռուսական, հայ-պարսկական, հայ-թուրքական առնչությունների շուրջ եւ այլն:

Երրորդ գլխի **առաջին մասը** ներկայացնում է հակասական ձևակառուցող ունեցող եւ լեզենդ դարձած այդ ուսումնասիրությունն ու նրա գրական արձագանքների քննաբանությունը:

Առաջադրվող հարցի վերաբերյալ ներկայացված են թե՛ XIX դարավերջի քննական մտքի ներկայացուցիչների (Րաֆֆի, Լեո, Հայկունի (Հ. Գեղամյանց), Ս. Բարխուդարյան), թե՛ XX դարավերջի եւ XXI դարասկզբի մեկնաբանների (Բ. Ուլուբաբյան, Դ. Պետրոսյան, Հր. Բեգլարյան) քննությունները:

Երկրորդ մասը Մակար Բարխուդարյանի արցախապատումի մեկնությունն է՝ ներկայացված «Արցախ» մեծարժեք աշխատությամբ:

Աշխատանքի **չորրորդ՝ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն պատմաբանասիրական մեկնությամբ՝** գլխի թեման Ապրես Բեկնազարյանի պատմական մերժված ուսումնասիրությունն է, որը բացահայտված է ժամանակաշրջանի գրապատմական համապատկերում՝ բնագրային եւ մեկնողական շերտերի լուսաբանությամբ, ինչը հնարավորություն է տալիս գրքի վերաբերուողումը ավարտին հասցնել՝ առաջնային ընդունելով հեղինակային կենսապատումի անցքերը՝ տեղի ունեցած Պարսկաստանի մայրաքաղաքում, ինչն իր հերթին օգնում է վերլուծություններն ու մեկնաբանությունները դիտելու հաստատուն ու հորինաբանության սահմաններից դուրս, իսկ ներկայացված պատմության փաստերը՝ որպես Արցախի պատմության անբաժանելի ու արժեքավոր մաս:

Հայ գրականության պատմության ընդհանուր համատեքստում **առաջին անգամ** է քննվում **Արցախի թեման** եւ **Արցախի հայտնությունը**, ուստի այս առնչությամբ՝ այն որպես **հիմնախնդիր, գիտական արժեք** ու **գիտական նորույթ** է ներկայացնում եւ ունի **արդիական հնչեղություն**:

Հետազոտության առաջադրված **խնդիրները, նպատակը, վարկածը** փորձել ենք հիմնավորված ներկայացնել, ուստի այն **գնահատման** եւ **վերագնահատման** հետաքրքիր շերտեր է աղերսում, որը գիտականորեն ապացուցելի ու ընդունելի է՝ **տեսական ու կիրառական** նշանակությամբ բնութագրված:

²Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Րաֆֆի, Խամսայի մելիքությունները), էջ 370 :

³Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Սանկտ Պետերբուրգ, 1886 (այսուհետեւ՝ Բեկնազարեանց Ա.), էջ է:

Ներկայացվող «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրության առաջնային խնդիրը նրա քննահամակարգը **գիտականացնելն** է՝ արցախագիտական պատմաբանասիրական մտքի մշակվող գաղափարակարգմամբ:

Ցուցված ասպեկտներով նյութը բոլոր գլուխներում լայն առնչություններով քննվում է **առաջին անգամ որպես նորույթ**՝ աշխատանքն ավարտին հասցնելով եւ առաջնորդվելով գրականագիտական **հերմենեւտիկ, աքսիոլոգիական, աղբյուրագիտական, պատմաբանասիրական, համադրական, կառուցվածքաբանական, վերլուծական ու վերադժեւորման մեթոդներով**:

Գ Լ ՈՒ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Արցախյան առաջին վեպը (Պլ. Ջուբով, «Ղարաբաղի աստղագետը»)

«Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» խորագիրը կրող ատենախոսության **առաջին գլուխը՝ «Արցախյան առաջին վեպը (Պլ. Ջուբով, «Ղարաբաղի աստղագետը»)**, նվիրված է ռուս գրող, հետազոտող, պրոֆեսոր, 30 տարի իր կյանքը Անդրկովկասում անցկացրած Պլ. Ջուբովի պատմավեպի քննությանը: Այն թե՛ հայագիտության եւ թե՛ ռուս գրականագիտության մեջ առաջին անգամ հիմնավոր պատմաբանասիրական քննության է ենթարկվում առաջադրվող աշխատանքում: Տվյալ դեպքում այն ձեռք է բերում որոշակի **գիտական նշանակություն** եւ շոշափելի **մեթոդում**, ինչը պայմանավորված է ուսումնասիրության **նորույթով, տեսական եւ կիրառական նշանակությամբ**, հատկապես այն գաղափարակարգով, որ Ջուբովի պատմավեպը գրված է «հարցասեր գրողի» (Րաֆֆի) նպատակադրմամբ՝ վեր հանել անդրկովկասյան ժողովուրդների, հատկապես հայերի ոչ հեռավոր ժամանակաշրջանի պատմական կյանքի նկարագիրը, ներկայացնել նրանց քաղաքական կյանքի խառնիխուռն եւ տխուր ուրվագիծը, ինչը գրողին լիովին հաջողվել է:

Տարբերակենք XVIII դարավերջին ու XIX դարակազմին ռուսական կայսրությունում ապրած երկու Պլատոն Ջուբովներին: Առաջինը Եկատերինա II կայսրուհու ժամանակաշրջանում մեծ հեղինակություն ունեցող, վերջինիս ֆավորիտներից մեկը հանդիսացող, պետական, ռազմական գործիչ, գեներալ-նահանգապետ, Սեւծովյան նավատորմի ղեկավար Պլատոն Ալեքսանդրի Ջուբովն էր՝ Ռուսիայում երկրորդ կայսր հռչակված, որի փառքը անշքացավ Եկատերինա II-ի մահվանից հետո: Նա իր մահկանացուն կնքել էր 1822թ.:

Մյուս Պլատոն Ջուբովը հայագիտության մեջ հայտնի է XIX դ. երկրորդ կեսի ռուսահայոց գրական մշակութային գործիչ Մ. Միանսարյանցի «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» մոնումենտալ աշխատությունից:

«Ղարաբաղի աստղագետը» վեպի հեղինակը, ըստ Միք. Միանսարյանցի ներկայացրած մատենագիտական ցանկի, Անդրկովկասի պատմությանը վերաբերող էլի գործեր ունի, ուստի նրան աննշան գրող չպիտի համարել:

Ջուբովի գրական ժառանգության մեջ առանձնանում է 1834թ. Մոսկվայում հրատարակված «Ղարաբաղի աստղագետը»:

Մ. Միանսարյանցի աշխատության մեջ ներկայացված են ու քննության ենթարկված շուրջ 6000 գրքեր, հողվածներ ու այլակարգ նյութեր՝ հայերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ այլ լեզուներով: Այս մատենագիտական գրքում մեկնաբանված են նաեւ ռուս գրականության ներկայացուցիչ, գրող, պրոֆեսոր Պլատոն Ջուբովի աշխատանքները, գեղարվեստական երկերը, որոնք գետեղված են Միանսարյանցի գրքի մատենագիտության 362, 678, 736, 745, 756 երեսներում: Աշխատությունների մեջ կա հատուկ նշանակության գիրք, որի գեղարվեստական ու պատմական ֆոնի վրա քննության է առնված Ղարաբաղի մելիքության ժամանակների պատմագեղարվեստական նկարագիրը: «Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկությունը 1752 թվականին». այսպես է վերնագրված Ջուբովի պատմավեպը, որը կոչվում է նաեւ «Անդրկովկասեան պատմական վեպ»: Ջուբովի երկը, ինչպես նշել ենք, ռուսերենից հայերեն է թարգմանել Րաֆֆին 1882թ.:

Երկու գլուխներում Րաֆֆին ներկայացրել է պատմական միջավայրն ու փաստերը ճշտող յուրօրինակ ընդհանրացումներ ու պարզել Ջուբովի ցուցած ծանոթագրությունները, կատարել ճիշտ հետեւություններ, ցույց տվել հեղինակի կողմից թույլ տրված անճշտությունները եւ այլն:

Պատմաբան Ա. Վիրաբյանը իր «Գիրք դարերի խորքից» ուսումնասիրության մեջ⁴ խոսում է «Տ. Ջուբով» պատմաբանի մասին: Անվան եւ աշխատության սխալ վերտառությո՞ւն է սա, որ վերաբերում է նույն Պլատոն Ջուբովին ու նրա «Ղարաբաղի աստղագետը» վեպին՝ հայտնի չէ, թե՞ Տ. Ջուբովը նրա ազգականն է՝ իր «Ղարաբաղի աստղերը» երկով:

Պլ. Ջուբովը «Ղարաբաղի աստղագետի» գլխավոր նպատակը՝ ցույց տալ մելիքների երկպառակությունների հետեւանքով առաջացած Ղարաբաղի քաղաքական ծանր իրավիճակը, առաջադրելով՝ նշում է նաեւ պարսիկների անհարկի միջամտությունները մելիքների կյանքին, վերջիններիս դեպի պարսկական քաղաքական կողմնորոշում հաճախակի փոխվելը, որը, ըստ հեղինակի, ծանր հետեւանքներ է ենթադրում: Այս գաղափարը Ջուբովը մարմնավորում է երեւույթը ներկայացնող աստղագետ Հասանի հավաքական կերպարում՝ նրա կատարած հրեշավոր ծառայությունները Ղարաբաղի կյանքում համարելով մելիքների կողմից թույլ տված սխալների շարունակություն, ոյուրախաբություն, օտար բարքերի ընդօրինակում, անհամաձայնություններ, որոնց հետեւանքը նա համարում է Հասանի նշանավոր գուշակությունը, եւ այս ամենից հետեւություններ անելով՝ փաստում ռուսական կողմնորոշման առավելությունը:

⁴Տե՛ս Վիրաբյան Ա., Գիրք դարերի խորքից, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1998, էջ 5 :

«Ղարաբաղի աստղագետի» սյուժեի, կերպարների համակարգի քննությունը հետաքրքիր առանձնահատկությունների յուրօրինակ շերտեր է բացում, որոնց ակտիվ ընթացքը ցույց է տալիս գեղարվեստական երկի զարգացման ռոմանտիկական սուբյեկտիվության հնարավոր կոնցեպցիան:

Դիպաշարի եւ կերպարների համակարգում տրամաբանական-մտահայեցական կշռույթը դառնում է գեղարվեստական որակ: Հեղինակը ներկայացնում է վեպի կառույցը՝ պատճառաւեւտեւանքային անցումները քննելով որպէս գեղարվեստական երկի դրական հատկանիշ:

Հերոսների երկխոսություններում բացահայտվում է վեպի հիմնական գաղափարը, որի արյունատար երակը Խամսայի մելիքությունների քաղաքական ձակատագրի վերհանումն է՝ իր բոլոր վերուվարումներով ու դրանցից արված զուբովյան հետեւություններով:

Ատենախոսության բոլոր գլուխներում աշխատանքը կատարված է քննական, վերլուծական՝ բնագրային, գրականագիտական մեկնություններով:

Երեւան է հանված եւ հստակ նշված ու հիմնավորված Ջուբովի գրքի վերլուծության **արդիականությունը, հրատապությունը, պրակտիկ արժեքը եւ գիտական նորույթը**, այս ամենը տեսանելի է աշխատանքի ընթացքում, քանի որ գիրքը կարելու մեկնակետ է հանդիսանում արցախագիտության զարգացման գործում:

Ջուբովի գրքի **գլխավոր խնդիրը** XVII-XIX դդ. Խամսայի մելիքությունների քաղաքական նկարագրի վերհանումն է՝ լայն առնչությունների ներքո, **Նպատակը** Խամսայի մելիքությունների քայքայումը ներկայացնելը՝ ցուցված իր նախապատճառներով եւ հետեւանքներով, դրանցից արվող հետեւություններով, քաղաքական կարգը ռուսական տիրապետության տակ գեղարվեստորեն պատկերելը:

Պլ. Ջուբովի «Ղարաբաղի աստղագետը», պատմաբանասիրական մեկնության ենք ենթարկում քննական զուգորդումներով, բացահայտելով հետազոտության **խնդիրները, ժամանակի ու անհատական ոճերը**, տեսական ընդհանրացումներով դիտարկելով պատմական երկին հատուկ **ժանրային** ինքնատիպ միտումները, **կերպարային, գաղափարական, սյուժետային, բովանդակային համակարգը, տիպաբանական առանձնահատկությունները**, Ջուբովի առաջադրած **խնդիրներն** ու **Նպատակը**, պատմական իրողությունների **ներդաշնակությունն** ու **գեղարվեստականացման հնարանները**, դասականապաշտությունից՝ ռոմանտիզմ **գրական դպրոցների** անցման հղացքները:

Գ Լ ՈՒ Ն Ե Ր Կ Ր ՈՐ Դ

Մելիքությունների պատմական ձակատագիրը (Րաֆֆի, «Խամսայի մելիքությունները»)

Երկրորդ գլուխը ներկայացնում է **Րաֆֆու «Խամսայի մելիքությունները»** պատմական ուսումնասիրության մանրագին քննությունը:

«Խամսայի մելիքությունների» գլխավոր գաղափարական առանցքն է ցույց տալ, որ Ղարաբաղում մինչեւ XIX դարի առաջին տասնամյակները պահպանվել են հայկական իշխանությունները եւ ընդգծել, թե որոնք էին այն քաղաքական անցքերը, որոնք պատճառ դարձան դրանց կործանման: Րաֆֆին պատասխանատվությամբ է հավաքել յուր պատմության համար փաստեր, պատմական այլեւայլ արխիվներ քննել, բնագրեր հայթայթել եւ փորձել դրանք ի մի բերել ու ըստ այդմ՝ ամբողջացրել իր պատմությունը: Իսկ հայկական իշխանությունների կործանման գլխավոր պատճառը պանդխտությունը, հայոց գաղթականությունն է համարում:

Պատմության փակված էջ դարձան Պետրոս Մեծի եւ Եկատերինա II-ի քաղաքական խոստումները՝ Անդրկովկասի քրիստոնյաների վերաբերյալ: Նրանց հաջորդները չէին ցանկանում որդեգրել իրենց մեծ նախորդների քաղաքական ծրագրերը:

Րաֆֆին քննության է առել նաեւ Ղարաբաղի հոգեւոր այրերի գործունեության շրջանակները՝ մեկնել Ղարաբաղի երեք կաթողիկոսների վարքը:

Գրքի ուսումնասիրությունը կատարված է գիտական պատշաճ մեկնաբանությամբ եւ արժեւորմամբ: Նյութն առաջին անգամ է պատմաբանասիրական քննության ենթարկվում: Այն արցախագիտության, հայագիտական միտքը ներկայացնում է **նորովի**՝ դրանով ընդգծելով աշխատանքի **նորույթը, գիտական կառուցվածքը, մեկնաբանությունները, արդիական հնչեղությունը**:

Ուսումնասիրության ներկայացված **հարցերը, խնդիրները** քննվել ու վեր են հանվել հաջորդաբար, տրվել են դրանց բացատրությունները, որոնք բերում են իրենց **նորույթը**, հաստատում **տեսական եւ կիրառական** նշանակությունը: Խամսայի մելիքությունների ձյուղագրության քննությամբ հանդես է եկել Արտակ Մաղալյանը՝ թեկնածուական հայտով:

Նյութի **մշակվածությունը** ցուցված է հիմնավոր քննությամբ, արժեքների գնահատմամբ, սակայն ընթերցող շրջանակներում որոշակի անհամաձայնություն կա Րաֆֆու ներկայացրած սկզբունքների, հարցերի առնչությամբ՝ կապված Խամսայի մելիքների իշխանական որոշ տների՝ եկվոր թե՞ բնիկ լինելու հարցի շուրջ նրա մոտեցումների հետ:

Հայ գրականության պատմության մեծ դասական Րաֆֆին, իր գրքերի գիրքը՝ պսակը համարելով «Խամսայի մելիքությունները» պատմական էսսեն, այն դիտում է որպէս մի աշխատություն, որում շարադրված են «Նյութեր հայոց նոր պատմության համար»:

«Այդ գիրքը,- շեշտում է գրողը Մելքոն Փանյանին գրած նամակում,- իմ բոլոր աշխատությունների պսակը պիտի համարել, ես դրանով կենդանացրի մի վաղուց կորած և մոռացված պատմություն. ես դրանով ապացուցեցի, որ հայկական իշխանությունը շարունակվում էր մինչև ներկա դարը: Դա մեծ բան է»⁵:

Պատահական չէն Րաֆֆու անդրադարձները պատմական թեմաներով երկեր եւ ուսումնասիրություններ ստեղծելու գործին:

⁵Րաֆֆի, հ. 10, էջ 582:

Խոստելով «Ղավիթ Բեկ» պատմավեպի ստեղծման համար օգտագործված պատմական աղբյուրների մասին Ռաֆֆին նկատում է. «Ես այս աշխատությունը, եթե ոչ բոլորովին, գոնե մասամբ լրացրի օտար աղբյուրներից օգուտ քաղելով: Բայց ինձ դեռ բավական տեղեկություններ մնում են պակաս: Այս պատճառով ես ընդհատեցի «Ղավիթ Բեկի» հրատարակության շարունակությունը «Սշակի» մեջ, դիտավորություն ունենալով անձամբ ճանապարհորդել Սյունյաց աշխարհում և այդ վեպի մնացած մասները իր տեղում մշակել»⁶:

Ռաֆֆին իր ճանապարհորդության բուն նպատակին անդրադարձնալով, վավերացնում է. «Իմ ճանապարհորդության նպատակը ոչ միայն «Ղավիթ Բեկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է, նյութեր հավաքել Ղավիթ Բեկից հետո հայտնված մելիքների կյանքից և գործունեությունից, որոնք կարող էին ծառայել ինձ առանձին վեպեր կամ պատկերներ ստեղծելու: Որքան թանկագին է մեզ համար այդ ժամանակների հերոսների հիշատակը անմահացնելը, այնքան ցավալի կորուստ է, երբ նրանք կմոռացվին, կանհետանան մեր անհոգությունից»⁷:

Մեծ վիպասանը գործում էր միանգամից երկու՝ «Ղավիթ Բեկի» եւ մելիքների պատմության համար նյութեր հայթայթելու ուղղությամբ: Այդ ուղեւորության արդյունքը գոհացուցիչ էր. պատմավիպասան-հետազոտողը ավարտին է հասցնում «Ղավիթ Բեկը» եւ շարադրում «Խամսայի մելիքությունները», որոնք հայ գրականության եւ հայագիտության արժեքավոր նմուշներից են:

Գ Լ ՈՒ Ն Ե Ր Ր ՈՐ Դ

Արցախի լեզենդը (Ապրես Բեկնագարյան, «Գաղտնիք Ղարաբաղի»)

Ատենախոսության **երրորդ գլուխն** ունի «**Արցախի լեզենդը (Ապրես Բեկնագարյան, «Գաղտնիք Ղարաբաղի»)** վերտառությունը: Այն երկու՝ «Լեզենդի ծագումը եւ գրական արձագանքները» եւ «Մակար Բարխուդարյանի արցախապատումը» մասերից է բաղկացած:

Սանկտ Պետերբուրգում, Ս. Բարխուդարյանի՝ գրաբարից աշխարհաբար փոխադրությամբ, Բաքվի մեծահարուստ (Մեծ Սյունիքի ծնունդ) Առաքել աղա Ծատուրյանի մեկենասությամբ հրատարակված Ա. Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն գիտական ուսումնասիրության երրորդ գլխի առաջին մասի **քննվող օբյեկտն** է, **առարկան**, նույն՝ XIX դարի հայ գրականության պատմությունն է՝ Արցախին վերաբերող գրականության առանձնացումով:

Ինչպես նկատել ենք, «Գաղտնիք Ղարաբաղի» պատմության **մեկնաբանական հարցի շուրջ**, XIX դ. գրաքննադատությունը տարաբնույթ գրախոսություններ է տպագրել այլեայլ պարբերականներում «Սշակ», «Մեղու», «Արձագանք», «Մեղու Հայաստանի» եւ այլն: Արժեւորման ճշմարիտ գնահատության հետ միաժամանակ պատկերը կտրուկ փոխվել է դեպի բացասական կողմը:

Եվ այսպես, քննախոսության մեջ Ա. Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն **130 - ամյա հեռավորությունից առաջին անգամ փորձում ենք վերաթմուրել**, վերլուծության ենթարկել համադրական եւ աղբյուրագիտական, պատմահամեմատական ասպեկտներում՝ ձգտելով վեր հանել նրա մեջ ամփոփված ռացիոնալ հատիկը: Ուստի եւ կարելու է ենք աշխատանքի **գիտական նորույթը, արդիական բնույթն ու գործնական արժեքը, ընդունելի վարկածը**՝ ներկայացնելով «Գաղտնիք Ղարաբաղի»-ն որպես արցախագիտության-հայագիտության համար **վերագնահատման արժանի պատմական ուշագրավ երկ**:

Գրքում ներառված են նաեւ XVIII - XIX դդ. հայ բանահյուսական, գուսանական, գրական երկերի բացառիկ նմուշներ եւ հեղինակներ (Սայաթ-Նովա, Առստան բեկ, աշուղ Ղարա, Միսկին-Բուրջի եւ այլն), որոնց քննությունն ու մեկնությունը եւս այս համատեքստում առաջին անգամ ենք ներկայացնում հայագիտական մտքի ուշադրությանն ու գնահատմանը:

Ուսումնասիրության **նպատակը եւ խնդիրները ժամանակաշրջանի գրական համապատկերի, ժամանակի ու ազգային, անհատական ոճերի** վերհանումն է, կուսակից խմբակցությունների հարկի եւ անհարկի պայքարը, ինչի հետեւանքով մերժվել են գրական մշակներ ու ստեղծված երկեր:

«Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հրապարակ իջնելու եւ մերժվելու ժամանակագրությունը քննել ենք թե՛ գրքի վերաբերյալ հրատարակված քննական արձագանքների վերլուծության եւ թե՛ պարբերական մամուլի բախումների լույսի ներքո:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ ժամանակի իրարամերժ կարծիքների հանգույցում հայտնվել է մի գիրք, որն ազդարարեց Արցախ-Ղարաբաղի առեղծվածի խորապես ուսանելի դասերը: Եվ, այնուամենայնիվ գիրքն անէացավ մոռացության մշուշում՝ առավելապես դասվելով հետաքրքրությունից դուրս գրական զեղծարարության շարքը: Սակայն ժամանակի ընթացքում վերստին հայտնվեց հետազոտողների ուշադրության կենտրոնում եւ վերահամատարվեց Արցախի պատմության աղբյուրագիտական ցանկում որպես **գիտական նորույթ**:

Ժամանակաշրջանի համապատկերում քննության ենթարկելով XIX դարավերջի հայ գրականության մեջ գոյություն ունեցող որոշակի չվճռվող, քննություն չբռնող հարցերի մեկնումը՝ կարելու է ենք **թեմայի համապատասխան մշակվածության հարցը** եւ աշխատանքի բերած **անհերքելի գիտական նորությունը**: Իսկ **ուսումնասիրության նորությունն** ակնբախ է մի քանի առումներով:

Այդ ամենը ձգտել է ներկայացրել ենք նորովի, գիտական գնահատումներով: Քննության նման մեխանիզմը մենք օգտագործել ենք՝ բացելով պարզաբանման լայն շրջանակներ:

Մեկնաբանական օղակներում ուշադրություն ենք դարձրել եւ «Գաղտնիք»-ի, եւ Ռաֆֆու ու Լեոյի, եւ Ս. Բարխուդարյանի, Հայկունու երկերի գաղափարական ուղղվածությանը, նրանց առանձնահատկություններին, պատմական, վավերագրական, տեսական ընդգրկումներին, տիպաբանական, լեզվաոճական

⁶ Ռաֆֆի, Իմ ընթերցողներին, հ. 10, էջ 45:

⁷ Նույն տեղում, էջ 45:

յուրօրինակությամբ, արցախահայության կյանքի բազմակողմանի մեկնաբանմանը XVIII-XIX դդ. քաղաքական ծանր իրավիճակի նկարագրին զուգահեռ:

Դրանք հայագիտական մտքի դիտանկյունից նոր էջ են բացում նյութի քննության ընթացքում:

Աշխատության քննության նման հիմքը **կիրառված սկզբունքների** ուսանելի կողմերն է հատկանշում, քանի որ դրանք գրականագիտական համակողմանի վերլուծություններ են՝ սինթեզված պատմաբանասիրական, մեկնողական և արժեքաբանական աղբյուրներով:

Խաչածեւիլ, զուգահեռվել, համադրվել են պատմության ու փիլիսոփայության, գրականության, գեղարվեստի առանցքները, քննադատության ու պոլեմիկայի սահմանները:

Ուսումնասիրության **փորձաքննությունը** զարգացել է փուլային բաժանումներով:

Աշխատանքի տարաբնույթ քննական հարցադրումները, կարելի է առանցքներն առանձին հոդվածներով հրատարակվել են պարբերական մամուլում, թերթերում, գիտական հանդեսներում:

Ուսումնասիրության գիտական **մշակվածության** անդրադառնալով՝ մշենք, որ գրքի շուրջ գրվել են թե՛ կարծիքներ, թե՛ գրախոսություններ, թե՛ այնպիսի կարգի մեկնություններ՝ լրագրային, հրապարակախոսական, և առանձին աշխատանքներ, որոնցից են՝ Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը (1886), Լեոյի «Վէպ թե՛ պատմություն»-ը (1887), Մ. Բարխուդարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը, Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ը:

Րաֆֆու, Լեոյի և նրանց կողմնակիցների կողմից մերժվել է «Գաղտնիքը» և անգամ չի թույլատրվել մեկնաբանական որեւէ այլ կարծիք տպագրել մամուլում:

Սակայն ժամանակն է ցույց տալ իրերի ու երեւոյթների իրական պատկերը, մեկնել այդպիսի գործերում հաճախ լրագրության դրսևորած կոպիտ դերը, մասնավոր և կուսակից անձանց ու պարբերականների անհանդուրժողականությունը, կուսակցական առձակատումները, պոլեմիկայի դիքորոշումը, բանավեճի պահանջվող սկզբունքների խախտումը, որոնց հետեւանքով մերժվել են թե՛ արժեքավոր գրքեր, թե՛ հեղինակներ: Այսպիսի ճակատագրի են արժանացել նաեւ ժամանակաշրջանի գրապատմական կյանքի աղմկահարույց երկը՝ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ու նրա թարգմանիչը:

Ուստի գիտական այս աշխատության մեկնումը, **վերաբծեւորումը** խիստ **հրատապ** է դառնում արցախահայտական ու հայագիտական մտքի փակ էջերի վերհանման, վերաբծեւորման տեսանկյունից:

Րաֆֆին իր մատենախոսության մեջ հակված է դիտարկելու, հերքելու և հաստատելու «Գաղտնիք»-ի վերաբերյալ շատ հարցեր, որոնք ըստ եղած բնագրային նյութի քննության ենք ներկայացրել: Նույնը Լեոյի հարցադրումների դեպքում է կատարված:

Միակ ճիշտ, լուսաբանող աղբյուրը հարցի առնչությամբ Մ. Բարխուդարյանի գիրքն է, որտեղ հեղինակը մեկ առ մեկ ցույց է տալիս նյութի նկատմամբ Լեոյի այսպես ասած «տհասությունը», աչառու լինելը, նրա կողմից իրեն հայիղելը, պատմությանը անտեղյակ լինելը և այլն:

Հարցի ճիշտ մեկնաբանությունը հաստատող եւս մի աղբյուր, որից մենք հատուկենտ փաստեր էինք բերել, Հայկունու 2013թ. լույս տեսած «Ուղեգնացական ակնարկներն» են: Հեղինակը ճիշտ մեկնաբանություններ է տալիս մեզ հուզող հարցերին՝ գնահատելով «Գաղտնիք»-ի գիտական արժեքը, պատմական հավաստի տեղեկություններն, ու թե՛ ինչպես է նա իր ուղեւորության ընթացքում փնտրտուքներ կազմակերպել «Գաղտնիք»-ի հեղինակին՝ Ապրես Բեկնազարյանին գտնելու, նրա գերեզմանի տեղը պարզելու ուղղությամբ:

Ա. Բեկնազարյանի պատմությանը, հին ժամանակների սովորույթով, գիտական շրջանակներում լուրջ չեն վերաբերվում, ինչը գիտական ճիշտ մոտեցում չէ:

Պատմությունն ամփոփված է **երկու մասում (հատորում)**:

Նյութը բնագրային է քննական, մեկնաբանական ու արժեքաբանական համակարգերով վերլուծության ու վերաբծեւորման ենք ենթարկել ու փաստացի տվյալներով ապացուցել, որ այն արժեքավոր պատմական և ոչ թե՛ վիպական աշխատություն է, որն իր մեջ ամփոփում է բարձր իշխանությունների, պաշտոնատար անձանց կողմից գրված վտանգավոր հաղորդագրությունների, գաղտնի նամակների, արքայական հրովարտականների և այլ կարելի փաստաթղթերի տեսքով հաղորդագրություններ 1795-97, 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի պատմական իրադարձություններ, որի բազմաթիվ էջերում պատկերված են արցախահայության, Խամսայի մելիքների, մելիքությունների, հոգեւոր առաջնորդների հետապնդած խնդիրների, իրար հետ ունեցած վեճերի, կռիվների, անհամաձայնությունների պատկերը: Ներկայացված են նաեւ այդ հողի վրա օտար մարմնի՝ Ղարաբաղի խանության ստեղծման պատմությունը, Իբրահիմի և Մեհտի Ղուլիի ոճրագործությունների բազմապիսի նկարագրությունները, նրանց կողմից կատարված անօրինությունների, մելիքների և հոգևոր իշխանությունների հանդեպ կազմակերպած անթիվ խարդախությունների, Ղարաբաղի հողերի յուրացման, դրածո մելիքների ու հոգեւոր այրերի դավաճանական քայլերի մասին եղած փաստերը՝ ընդդեմ հարազատ մելիքների և ժողովրդի, ապա պարսից արշավանքների, Ղարաբաղի քաղաքական կյանքին վերաբերող դեպքերի, Շուշիի պաշարման, Թիֆլիսի ավերման պատմությունները, Խամսայի մելիքների պայքարը հանուն հայրենիքի ազատության, միաբանության, նրանց ցուցաբերած ռուսամետ և պարսկամետ կողմնորոշման, Ղարաբաղի քաղաքական ճակատագրի հետաքրքիր ու արժեքավոր նկարագրությունները, Աղա Մահմեդ խան, Ֆաթալի շահ, Աբաս Միրզա և այլ օտար տիրապետողների կերպավորումը, որոնք փորձել և փորձում էին իրենց կապված տեսնել Ղարաբաղի քաղաքական ճակատագրին և իշխող նրան:

Այս ամենը Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք»-ում հզոր, փաստացի, հաճախ՝ խառնիխուռն, վերիվարումներով լի պատմական տեսադաշտ է ստեղծում մեր հայրենիքի պատմության վերհանման համար, որի ոչ մի դրվագը, ոչ մի դեպքում արտագրություն անվանել չի կարելի՝ ոչ Րաֆֆուց, ոչ ուրիշ մի այլ աղբյուրից: Պետք է կարողանալ վեր հանել պատմականությամբ կառուցված նրա ողնաշարը և ընդունել նրանում ամփոփված պատմական փաստերի հարազատությունն ու ճշմարտացիությունը, ինչի օբյեկտիվ քննությունն ու գնահատությունը եղել է մեր ուշադրության կիզակետում:

Երեւոյթի բացահայտմանը օգնում են նաեւ «Գաղտնիք»-ի երկրորդ հատորում ամփոփված տեղեկությունները հեղինակի կենսագրության դրվագների մասին, որոնց մեծ մասը համարյա կատարվում է

պարսից պալատում, եւ որոնք իրենց հերթին ճշմարտապատում երանգ են հաղորդում գրքին ու նրա ներկայացրած փաստերին՝ կապված Ղարաբաղի պատմական իրադարձություններին, հայր եւ որդի պատմիչների՝ Աբրահամ եւ Ապրես Բեկնազարյանների՝ շահի պալատում վաստակած սիրո ու վստահության, ունեցած բարձր պաշտոնների (Աբրահամը՝ Իբրահիմը, ի վերջո պարսից պետության մեծ ներքինապետը, Ապրեսը՝ Ալլահվերդին, պարսից շահի ստորագրած փաստաթղթերի, արձակած իրավարտականների գլխավորը եւ գաղտնի գրագիրը դարձան), պարսկահայությանը բազմապիսի օրինակներով սատարելու, օգնության ձեռք մեկնելու, մանավանդ՝ հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների բացահայտմանը որդեգրվեցին, որոնք իրենց հերթին օգնում են վեր հանելու Ղարաբաղի քաղաքական ճշմարիտ նկարագիրը, կերպավորում նրա դառնություններով լի ճակատագիրը:

Ուսումնասիրության **կառուցվածքը** բարդ է, բոլոր մասերն իրար շաղկապող օղակներ ունեն, նրա **վերաբժեւորումը** գիտական **հրատապ** ու **արդիական հնչեղություն** ունի, **պրակտիկ արժեք**, իսկ առաջադրված **հարցերն** ու **խնդիրները**, **վարկածը**՝ ապացուցելի եզրեր:

Առաջին անգամ հայագիտության մեջ բոլոր աղբյուրների քննությամբ ներկայացվող հայ գրականության **փակ էջը** դնում ենք **վերազնահատման**:

Այն գիտական սթափ մոտեցում է պահանջում եւ ոչ թե ինն ժամանակների հանգույն՝ անիմաստ հերքում, մերժում: Որքանով որ յուրաքանչյուր հայի համար թանկ է իր հայրենիքի պատմությունը, այնքանով «Պաղտնիքը», նրա մեջ ամփոփված արցախահայության ճակատագրի բազմապիսի դրվագները պետք է գնահատվեն ու վերադարձվեն ժողովրդին՝ նրա շահերին ծառայելու սրբազան առաքելությամբ:

«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ»-ի գիտական ուսումնասիրությունների 2010 թվականի գիրքժ թիվ 13 համարով հրատարակ իջած Հայկունու (Գեղամյանցի) արժեքավոր «Ուղեգնացական ակնարկներ» աշխատասիրությունը հայտնություն եղավ՝ մեր կողմից վերաբժեւորման դրված Ա. Բեկնազարյանի «Պաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության՝ ուշադրության ու հաստատման արժանի կարեւոր առանցքների լուսաբանման համար:

Ղարաբաղի Խնածախ գյուղից սերված Աբրահամ եւ Ապրես Բեկնազարյանների ջանադրությամբ, հաստատականությամբ, սրբազան ուխտապահությամբ, խիզախամբ ստեղծվել է «Պաղտնիքը»(Հայկունու վկայությամբ՝ Րաֆֆու «Խամսայի մելիքություններից» մեկ տարի առաջ): Հայր եւ որդի պատմիչները եղել են ուսյալ, հայրենասեր, ավանդապահ հայորդիներ: Աբրահամը Պարսից Դռանը ցուցաբերած իր մեծ ծառայություններով եւ ստացած բարձր պաշտոններով բազմիցս պաշտպանել, աջակցել, օգնել է իր հայրենակիցներին, եղել է մեծ գորավար հայրենասեր, մի այլ մեծ հայրենասերի՝ մելիք Մեջլումի հավատարիմ զինվորը, զորավարը, հայրենի սրբությունների, հիշատակների, զորության, հայրենիքի անկախության պաշտպանը եւ նախանձախնդիրը: Նրա հորդորով ու օգնությամբ եւ նաեւ պարսից զորավար Հովհաննես մելիք Հայկազյանցի (Մելիքսեթ պատմագրի պապը) խորհրդով գրվել է այդ ամենի բարձրակետը հանդիսացող «Պաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրությունը: Նա մեծարվել ու գնահատվել է պարսից Աղա Մահմեդ, Ֆաթալի, Աբաս Միրզա շահերից եւ իր մահկանացուն է կնքել՝ մեծ պատվով ու շուքով թաղվելով Թավրիզում՝ Հայոց եկեղեցու բակում: Ապրեսը եղել է շահի դիվանի քարտուղարը:

Այս ամենը հետազոտել, քննել եւ վերաբժեւորել ենք «Պաղտնիք Ղարաբաղի»-ի գնահատման ընթացքում, ընդգծել դրա պատճառները: Իսկ այսօր Մ. Բարխուդարյանի «Քննադատություն քննադատութեանց» մեկնությանը ավելանում է Հայկունու «Ուղեգնացական ակնարկներ»-ում ամփոփված արժեքավոր նյութը, որը շատ կողմերով լույս է սփռում խնդրո առարկայի վրա: Այն **գիտական արդիական վերաբժեւորման հրատապություն** ունի, գիտական **նորույթ** է, **հիմնախնդիր**, հանդիսանում է որպէս **քննության օբյեկտ**, եւ հարցի **մշակվածությունը** դիտվում է «Պաղտնիք»-ի կարեւոր առանցքներից, աղբյուրներից մեկը:

Եւ ոչ միայն. այն **հայագիտական** մտքի **արցախագիտության** ճյուղի հարստացմանն իր մեծ ավանդն է բերում շատ ու շատ տեսանկյուններից, հաստատապես կանգնում Մակար Բարխուդարյանի՝ տարածաշրջանը ներկայացնող «Արցախ» բարձրարժեք ուսումնասիրության կողքին, գերազանցում Սարգիս Զալալյանցի «Ուղեւորություն ի Հայս» աշխատությանը իր արժարժած խնդիրներով, ներկայացրած բնագավառներով, դիտողականությամբ, քննական մտքով, նյութի նկատմամբ դրսեւորած պատասխանատվությամբ:

Սա այն դեպքն է, երբ հաստատվում է, որ երբեք ոչ մի եռանդ, ստեղծված գիտական արժեք, մշակի կատարած ճշմարտացի աշխատանք, պահվածք չի՝ կորչում, չի՝ անտեսվում՝ նախանձախնդիրների կողմից երեսն հանվելով, գիտական արժեւորում ստանալով:

Երրորդ գլխի երկրորդ մասը՝ «Մակար Բարխուդարյանի արցախապատումը» եւս արժեքավոր անդրադարձ է Արցախի պատմությանը՝ նրա հնամենի բնաշխարհի, աշխարհիկ եւ հոգեւոր արժեքների, պատմական, բուսական ու կենդանական աշխարհի, տնտեսական, սոցիալական, աշխարհագրական, բազմապիսի շերտերի վերհանման տեսանկյունից, ինչը վառ կերպով ի ցույց է դրված «Արցախ» մեծարժեք գրքում: Այս զուգահեռի վրա ընդգծված է Մակար Բարխուդարյանի՝ իր կողմից համեստ դիտված, բայց ծանրակշիռ վաստակը արցախագիտության մեջ:

Ուսումնասիրությունը ճանապարհորդական գրառումների մի հետաքրքիր հավաքածու է: Այն հեղինակը հյուսել է Արցախում կատարած երկարատեւ ճանապարհորդությունների արդյունքում: Մանրամասնորեն են ներկայացված Արցախի գյուղերն ու քաղաքները, աշխարհիկ եւ հոգեւոր շինությունները, չնաշխարհիկ բնությունը, աշխարհագրական ու պատմական լանդշաֆտի ճիշտ պատկերը: Մ. Բարխուդարյանը ցավով է փաստում հայրենակիցների կողմից ցուցաբերած անհոգ ու անտարբեր վարքը Արցախի հնությունների հանդեպ, նշելով, թե մեր նախնիները ինչ են ավանդել սերունդներին, թե «չգիտենք թե պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք թե ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում»⁸:

⁸Բարխուդարյանց Մ., Արցախ, էջ Ա:

Քննելով Արցախի աշխարհի աշխարհագրական և պատմական տեղանվան հարցը՝ Բարխուդարյանը, աղբյուր ունենալով Խորենացու պատմությունը, նշում է փաստական նյութի կարելիությունը՝ իր նպատակադրումը շեշտելով. «Այս նահանգն զանազան դարերում փոփոխություններ կրելով Հայերից կոչուած է **Գ ա ռ գ ա ռ, Արցախ, Փոքր Սիւնիք, Խաչենք, Սեաւ Այգի, Իսկ Պարսիկներց և Տաճիկներցի Ղարաբաղ**»⁹:

Մ. Բարխուդարյանի գրքի շարադրանքում մի քիչ չորություն է զգացվում, բայց դա առաջին հայացքից: Ուշադիր ընթերցման, քննման ու հայեցման դեպքում մեր առջեւ բացվում է անկրկնելի, հրաշագեղ, հարուստ պատմությամբ, բարքերով, հոգեւոր և աշխարհիկ առաքինություններով պատկերավոր մի աշխարհ, որի անունն Արցախական երկիր է, մարդկային բնության հրաշքների թագ ու պսակ հանդիսացող խորհրդով, ազատության և քաջագործությունների մղվող արցախահայության անուրանալի հատկություններով:

Մ. Բարխուդարյանի «Արցախ» աշխատությունը XIX դարի Արցախի պատմության, մշակույթի, հոգեւոր արարումների վերաբերյալ անփոխարինելի վավերագիր է և ունի աղբյուրագիտական բացառիկ արժեք:

Գ Լ ՈՒ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Ղ

Ուսումնասիրության **չորրորդ՝ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն պատմաբանասիրական մեկնությամբ** **գլուխը** ուղղորդված է Ապրես Բեկնազարյանի պատմական ուսումնասիրության համակողմանի՝ բնագրային և տեսական աղբյուրների քննությանն ու վերլուծությանը, վերաբերումն է պատմիչի՝ Ապրեսի անձնական կյանքի՝ կարելիություն ունեցող իրադարձությունների մեկնությանը, որոնցից շատերը տեղի են ունեցել հեղինակի՝ պարսից արքաների աթոռանիստում գործելու, հոր՝ Աբրահամի հետ այնտեղ պաշտոնավարելու ժամանակ:

Չորրորդ գլխի բազմաբնույթ իրադարձությունները լույս են սփռում հեղինակի ինքնության և գոյության, շահի պալատում պաշտոնավարության, Ղարաբաղի քաղաքական կյանքում խաղացած դերի, քաջարի զորական հոր՝ հայրենապաշտ Աբրահամի՝ 1795-97 թթ. ռուս-պարսկական պատերազմին մասնակցելու, «Գաղտնիքում» պատմագրված փաստերի հավաստիության շուրջ, ամբողջության մեջ՝ Ղարաբաղի քաղաքական ու պատմական կյանքի, Ղարաբաղի ժանտ ու խորամանկ խաների ոճրագործությունների, հարազատ և անհարազատ հոգեւոր ու աշխարհիկ տերերի առձակատումների, մելիքությունների դառը ձակատագրի լուսաբանման տեսանկյունից, ինչը գրքի հավաստիությանն ու հեղինակի պատկանելությանը վերաբերյալ կասկածի նշույլ չի թողնում երկամիտության վերագնահատումը դարձնելով հույժ անհետաձգելի:

«Գաղտնիք»-ի ստեղծման հանգամանքների վերաբերյալ Մակար Բարխուդարյանի վարկածները մի որոշ հիմք տալիս էին Րաֆֆուն և Լեոյին կասկած հայտնելու գրքի հեղինակային ինքնության և «այլժեի» պատմական հավաստիության վերաբերյալ: Սակայն պատումի կենսագրական եղանակը և իրադարձությունների անմիջական արձագանքները վկայում են պատմական ժամանակի ու դեպքերի անմիջական ընկալման մասին, ինչը հազիվ թե կարելի է վերագրել Բարխուդարյանի հորինաբանությանը: Ինչ վերաբերում է Րաֆֆու փաստարկին, թե «Գաղտնիք»-ի որոշ էջեր ուղղակի նույնանուն են «Խամսայի մելիքությունների» պատմությանը, ապա դա կարելի է վերագրել ոչ թե ուղղակի արտագրությանը, այլ պատմական դեպքերի ճշգրիտ ներկայացմանը, ինչը ինքնին հավաստում է «Գաղտնիք»-ի որպես փաստագրական երեւոյթի արժեքավորությունը: Այս առնչությամբ թարգմանիչն առաջաբանում նշում է, որ «Գաղտնիք Ղարաբաղի»-ն կարող է մեծ լույս սփռել ոչ միայն Ղարաբաղի պատմական մթությանը վերա, այլև՝ Ռուսաց Անդրկովկասի պատմական մթությանը, որը գաղտնի կատարած լինելով ցարդ մնացած են անհայտության մեջ»¹⁰:

Այնուհետև Ապրես Բեկնազարյանը մանրամասն ներկայացնում է իր կենսագրությունը՝ ընտանեկան կացության, ծնողների և ծննդավայրի անմոռաց հիշատակներով: Ընդգծելի է պատմիչի անհատական ոճի երակը, հետաքրքիր նրբերանգները՝ միախառն ազգային ու ժամանակի ոճերին:

Ըստ թարգմանիչի՝ «Գաղտնիք»-ը «պատմագրութիւն» է, իսկ նրա հեղինակը՝ Աբրահամ Բեկնազարյանը, «հմուտ պատմաբան», «երևելի պատմագետ» եղած է...»¹¹: Լինի հիշատակարան թե պատմագրություն, երկունս էլ յուրովի ունեն իրենց արժեքը և գնահատելի կողմերը: Իսկ «Գաղտնիք»-ում տեսանելի են թե՛ պատմագրության՝ ժամանակագրության, տարեգրության, նամականու և այլ ժանրերի, թե՛ գրական, պատմական, բանախոսական, աշխարհագրական, ազգագրական, փաստագրական, դիվանագիտական ու այլ կարգի նյութերի, թե՛ Աղվանից թագավորական տան ծագման, իշխանական տների ծննդաբանության, թե՛ մելիքությունների առկայության անժխտելի փաստեր, թե՛ պարսիկ, թուրք, ռուս և այլ ժողովուրդների հետ հարաբերությունների շերտեր, պատերազմական իրավիճակների քննություններ, արցախյան հատվածի հայության պատմության, մաքառումների, տոհմիկ հարաբերությունների, իրավական- վարչական հարցադրումների, մանր-մունր վեճերի, այրունահեղ կռիվների, դրածո խաների, պարսից տիրապետության ու մելիքների պատմության, ձակատագրի դրամատիկ անցումների անհերքելի փաստեր:

«Գաղտնիք»-ի պատմությունը երկու հատորում է ամփոփված և, անշուշտ, ինչպես շեշտում է նաև Մակար Բարխուդարյանը, երկրորդ հատորի ժամանակագրության ընդունված կարգի պահպանման փաստն ապացույց է նրա բարձրարժեքության:

«Գաղտնիք»-ը սկսվում է 1795 թ. պատմական զարհուրելի դեպքերով, երբ պարսից Աղա Մահմեդ ներքինի (Ախտա) շահը մեծաթիվ զորքով արշավում է Ղարաբաղ, կանգ առնում անառիկ Շուշիի մատույցներում և չկարողանալով այն մելիք Մեջլումի առաջնորդությամբ գրավել, արշավում է դեպի Թիֆլիս, քանի որ Իբրահիմն

⁹Սույն տեղում, էջ 2:

¹⁰Բեկնազարեանց Ա., էջ Ժ:

¹¹Սույն տեղում, էջ է:

ու վրաց Հերակլ արքան դաշնակիցներ էին, իսկ մելիք Մեջլումը ցանկանում էր շահի օգնությամբ Իբրահիմին տապալել եւ Ղարաբաղի խանությունը վերացնել, Հերակլին էլ պատժել:

Պատմական վավերագրերը փաստում են, որ թե՛ պարսից շահերը, թե՛ ռուսաց կայսրերն ու այլ միապետեր Հայաստանում եւ մելիքական Արցախ աշխարհում վարել են վերջիններիս համակրանքը շահելու ընդգծված քաղաքականություն: Նույն կերպ վարվել են նաեւ հայ մելիքական տները՝ իրենց քաղաքական հետաքրքրություններից դրդված ցանկանալով օրհասական պահերին օտար բռնակալների «մարդահաձ» համակրանքը շահել: Շատ հաճախ այդ երեւոյթը եղել է բախտորոշ երկու կողմերի համար էլ՝ իր քաղաքական դրսեւորումներով հանդերձ:

Նման փաստ մենք տեսնում ենք «Գաղտնիք Ղարաբաղի» երկասիրության մեջ:

«Գաղտնիք»-ը բացում է XVIII-XIXդդ. արցախահայության ծանր ու դրամատիկ ճակատագրի գիրքը, թող որ ինչ-որ տեղերում պատմականության որոշ հարցերի չհարաբերող ասպեկտներով, բայց երեւոյթները հիմնականում ներկայացնում են ժամանակաշրջանը ներկայացնող եւ բնութագրող հատկանշական կողմերով:

Այս իմաստով, «Գաղտնիքն» իրավամբ կարելի է համարել Արցախի պատմության անանց հուշարձաններից մեկը:

Գրքի արժեքավոր էջերից են նաեւ գրական, բանահյուսական նմուշների, դրանց հեղինակների՝ Սայաթ-Նովայի, Առստամ բեկի, աշուղ Ղարայի, Միսկին-Բուրջու մասին տեղեկությունները, որոնք նույնպես առաջին անգամ ենք բնութայան առնում եւ հայագիտության գնահատությանը ներկայացնում: Դրանք իրենց հերթին **նորոյթներ** են:

Ատենախոսության մեջ անդրադարձ է կատարված նաեւ Մուրացանի երկերին («**Քաղտասար Մետրապօլիտ Հասան Զալայեանի համառօտ կենսագրութիւն**», «**Ռուզան**», «**Խորհրդավոր միանձնուհին**»), որոնք ներկայացնում են Արցախի պատմության գեղարվեստական նկարագիրը. XIII դարում Արցախ աշխարհի հերոսական մաքառումներն աշխարհավեր մոնղոլ-թաթարական հրոսակների դեմ («**Ռուզան**») ու XVIII-XIX դարերում ծավալված Արցախ-Ղարաբաղ-Շուշիի՝ «Անդրկովկասի բանալիի» (Սարես Բեկնազարյան) ազգային-ազատագրական շարժման, Աղվանից կաթողիկոսության Զալայան մելիքական տան վերջին արժանավոր ժառանգորդի՝ Բաղդասար մետրոպոլիտի բազմաբեղուն գործունեության, Ղարաբաղի մելիքների ու մելիքությունների կործանման ծանր ժամանակաշրջանը («**Քաղտասար Մետրապօլիտ Հասան Զալայեանի համառօտ կենսագրութիւն**». այս մեմուարը, որը գրողի պատմական թեմայով գրված առաջին գործն է, ստորագրված է՝ **Գրիգոր Տէր Հովհաննիսեանց**), **ինչպես նաեւ** գրական, կրթական, հրատարակչական, հոգեւոր, մշակութային կյանքի բուն էությունը, որով Մուրացանը փորձում է ընդգծել 1860-ականների լուսավորության գաղափարակիրների առաքելությունը՝ առաջադրելով իր գյուղափրկիչ ծրագիրը, վիպագրելով Արցախ աշխարհի բնիկ առաքինությունները («**Խորհրդավոր միանձնուհի**»):

XIX դարի գրական արցախապատումը հայտնագործեց էկզոտիկ մի երկրամաս՝ բնաշխարհիկ ավանդույթներով, զարմանահրաշ բնությամբ, ժողովրդի ցեղական ամուր կազմվածքով ու բազմահմուտ կենցաղավարությամբ: Ֆիզիկական Արցախի հայտնության հետ մեկտեղ, գրականություն թափանցեց նաեւ հայոց արցախականի հոգեւոր աշխարհը՝ բանաստեղծական ու բարոյական արժեքներ հայտնաբերելով էթնիկական կերտվածքի բանահյուսական ավանդույթներում, պատմական ասքերում:

Ընդհանրության մեջ փորձել ենք համակարգված ներկայացնել «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ատենախոսությունը, որի **գիտադրույթը** XIX դարի հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա **Արցախի թեմայի** վերհանումն է, մեկնաբանությունն ու արժեւորումը: Ուսումնասիրությունն այս տեսանկյունից առաջին գրականագիտական փորձն է, որի կայացումը պահանջել է գիտական նյութին մոտենալ խիստ պատասխանատվությամբ՝ առաջնորդվելով ծրագրայնությամբ, նյութի հայթայթմամբ, դասդասմամբ, ժամանակաշրջանի ցուցմամբ ու գրականագիտական սկզբունքների պահպանմամբ:

Գիտական ուսումնասիրության չորս գլուխներում՝ կապված **գրական նախասիրությունների, ոճերի (անհատական, ազգային, գրական ուղղությունների, ժամանակի)** առանձնացումների, **ժանրերի** տարբերակումների, **գաղափարակառույցի, տիպաբանական մեկնումների, հեղինակային մոտեցումների, մանուկ օրգանների** հետեւողական ուղղվածության, **ազգային գաղափարաբանության**, բարոյական արժեքների գնահատման, ընդգծված հարցերի առաջադրման հետ, միաժամանակ **վերագնահատման** շերտեր ենք ներկայացրել: Դրանք **տեսականորեն** եւ **գիտականորեն** ապացուցելի, **նորոյթ** ներկայացնող ամբողջացումներ են նախանշում, արդի ժամանակաշրջանի գրականագիտական, պատմաքննական լույսի ներքո **ապացուցելի** եւ **գնահատելի** են դառնում, ինչին նպատակաուղղված է ատենախոսությունը:

Ե գ ր ա կ ա ց ու թ յ ո ն

Ատենախոսության **թեմայի** ընտրությունը եւ Արցախի **հայտնությունը** XIX դարի հայ գրականության մեջ ինքնին **գիտական նորոյթներ** են:

1. Արցախի պատմությունն անբաժանելի է հայոց պատմությունից: Միասության հիմքը էթնիկական, տարածքային, կրոնական, մշակութային ընդհանրությունն է: Սակայն ընդհանրությամբ հանդերձ՝ Արցախը մի ուրույն երանգ է գծում հայոց պատմության համապատկերում: Խոսքը վերաբերում է Ղարաբաղի մելիքություններին («Խամսայի մելիքություններ»), որոնք ինքնակառավարման կառուցվածք ունեին եւ սոսկ վասալական կախում ունեին շահական Պարսկաստանից:

2. XVIII դարասկզբի ազատագրական շարժումները Սյունիքում արթնացնում են մելիքությունների պատմական առաքելությունը Հայաստանի ազատագրության գործում: Իսրայել Օրիի եւ Հովսեփ Էմինի բանակցությունները եվրոպական պետությունների արքունիքների հետ միտված էին ազատագրական ուղիների որոնմանը: Այդ որոնումներն ի վերջո հանգում են ռուսական ցարիզմի՝ հարավային քաղաքականության հետեւանքների մեջ հայոց ազատագրության իրականացման նպատակին: Այսպիսինն էր հնդկահայ

հրապարակախոսների՝ Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի ծրագիրը («Որոգայթ փառաց», «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»):

3. Սպասումներն անցնում են ապարդյուն: Ռուս-պարսկական պատերազմի հերեւանքով Արեւելյան Հայաստանն ազատագրվում է պարսկական տիրապետությունից, սակայն ցարական կառավարությունը դրժում է հայերին ինքնավարություն տալու խոստումը եւ Ղարաբաղի կարգավիճակը հանձնում մահմեդական խանությանը: Այս ցարական կառավարողների բռնի միջոցներով մելիքներին իշխանագրկում են տոհմական իրավունքներից, որի հետեւանքով փոշիանում են մելիքությունները եւ ժամանակի ընթացքում ջնջվում պատմության հիշողությունից:

4. Ազգության ձեւավորումը եւ ազգային ազատագրության գաղափարների արթնացումը վերստին նորոգում են պատմության հիշողությունը եւ այս պարագաններում է, որ մոռացության մշուշից ուրվագծվում է Արցախի մելիքությունների առաապելը: Րաֆֆին եւ Մուրացանը տագնապով նշում են, որ կա մի մոռացված աշխարհ, հերոսական մի պատմություն, որ ուսանելի է ազգային շարժման տեսակետից եւ արժանի է հանգամանալից ուսումնասիրության: Այսպես, կարելի է ասել, որ մելիքությունների պատմության հետ Ղարաբաղը հայտնագործվում է XIX դարի հայ գրականության մեջ՝ որպես տիեզերական սուրբնեկտ եւ պատմաաշխարհագրական միավոր:

5. Մեր առեւտախոսության գիտական առաջադրույթն է՝ համակարգված ներկայացնել Արցախի վերաբերյալ հրապարակումները XIX դարի հայ գրականության մեջ եւ արժեւորել այն պատմական ու գեղարվեստական նշանակությամբ: Այս տեսակետից մենք առանձին բաժին ենք հատկացրել Պլատոն Ջուրովի «Ղարաբաղի աստղագետը» վեպին ոչ միայն այն հանգամանքով, որ դա **առաջին** վեպն է Ղարաբաղի մասին, **առաջին գեղարվեստապատմական** վավերագիրը, այլեւ դեպքերի նկարագրության **ճանաչողական** նշանակությամբ:

Րաֆֆին բարձր է գնահատել վեպը, թարգմանել է այն եւ առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակել 1882 թվականին:

6. Վեպի ժամանակը Արցախի պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկն է, երբ Վարանդայի Մելիք Շահնագարը Շուշին վաճառում է թուրք Փանահ խանին եւ իր դավաճան արարքով պառակտում մելիքների պետական միասնությունը: Վեպի հեղինակը ցույց է տալիս Փանահ խանի խորամանկ ու խարդախ գործելակերպը, որի շնորհիվ նա տիրապետող դիրք է գրավում երկրամասում՝ աղավաղելով հայոց ավանդական բարքերն ու սովորությունները: Վեպում դեպքերի ու իրադարձությունների ներքին անցումները կատարվում են աստղագետի գուշակություններով, որոնք պատումը երանգավորում են ռոմանտիկ-արկածային լուծումներով:

Սյուժեի հիմքում ներկայացնելով Ջուրովի եւ Սալիհայի սիրո պատմությունը, Ջուրովը գրավիչ գույներով պատկերում է Ղարաբաղյան բնաշխարհի կլիմայական փոխակերպությունների տեղային բնույթը, հայոց կենցաղի, բարքերի ու սովորությունների, կրոնական ծիսակատարությունների ավանդական ձեւերի հմայքն ու գեղեցկությունը, որոնք ճանաչողական արժեք են տալիս վեպին:

7. Ղարաբաղի **հայտնության** տեսակետից բացառիկ արժեք է ներկայացնում Րաֆֆու «Խամսայի մելիքություններ» պատմական էսսեն: Գրողը բարձր է գնահատել իր այս գործը՝ այն համարելով իր «բոլոր ստեղծագործությունների թագն ու պսակը»: «Խամսայի մելիքությունները» ընդգրկում է 1600-1827 թվականների պատմական ժամանակաշրջանը, մելիքությունների կազմավորման շրջանից մինչեւ դրանց փլուզումը ռուսական տիրապետության ժամանակ: Հանգամանորեն ներկայացնելով մելիքությունների աշխարհագրական տեղայնությունն ու իշխանական կառուցվածքը՝ Րաֆֆին ընդգծված ուշադրություն է հատկացնում Վարանդայի Մելիք Շահնագարի դավաճանական արարքի ճակատագրական հետեւանքներին եւ մելիքությունների չեզոքացման գործում Փանահ խանի արգահատելի խարդականքներին:

8. Հատուկ ուշադրություն ենք դարձրել մելիքությունների գործունեությանը պարսկական եւ ռուսական ազդեցությունների, հակամարտությունների ու քաղաքական նկրտումների կիզակետում, ինչպես նաեւ արցախյան ժողովրդի հերոսական ոգու, ավանդական դարձրած անունների (Թյուլի Արզուման, Դալի-Մահրասան, Չալաղան Յուզբաշի եւ ուրիշներ) սխրագործությանը:

9. Առեւտախոսության երրորդ գլուխը՝ «Արցախի լեգենդը», նվիրված է Ապրես Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի քննական մեկնությանը: Գլուխը բաղկացած է երկու մասից. 1. Լեգենդի ծագումը եւ գրական արձագանքները՝ Րաֆֆի, Լեո, Հայկունի, Մ. Բարխուդարյան, 2. Մակար Բարխուդարյանի արցախապատումը, որում քննաբանվում է նաեւ «Արցախ» պատմագրական էսսեն:

«Գաղտնիք Ղարաբաղի»-ն բաղկացած է երկու հատորից: Առաջին հատորը ներկայացնում է քաղաքական իրադարձությունները Արեւելյան Հայաստանում՝ ռուս-պարսկական հարաբերությունների քննությամբ: Երկրորդ հատորի գործողությունները կատարվում են պարսկական մայրաքաղաքում՝ շահի պալատական հսկողության ու հովանավորության միջավայրում: Գրքի շարադրանքում ոճական ներհյուսմամբ առկա են կենսագրական հղումներ, հայրենական հուշեր ու մշակութաբանական անդրադարձներ (Սայաթ-Նովա, Միսկին-Բուրջի):

10. XIX դարի հայ գրականության մեջ արտահայտվեց նաեւ Արցախի **գեղարվեստական պատկերը**: Նկատելի առաջընթաց է տեղի ունենում Արցախի մտավոր-մշակութային զարգացման գործում: Շուշին դառնում է Կովկասի քաղաքակրթության կենտրոններից մեկը: Ընդլայնվում է կրթական հաստատությունների ցանցը՝ ռեալական դպրոց, հոգեւոր դպրոց, օրիորդաց դպրոց, մանուկ, հրատարակչություններ, մշակութային օջախներ, արհեստակցական միություններ:

Արցախի հայտնությունը XIX դարի հայ գրականության մեջ իմացական հիմնավոր նախադրյալներ ստեղծեց հետագա ուսումնասիրությունների համար՝ նշանավորելով մի նոր ուղղություն ազգային մշակույթի, գրականության եւ պատմագիտության ասպարեզում:

Մ Ե Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակույթում (պատմաքննական ուսումնասիրություն), Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, մենագրություն, մաս առաջին: Գիրքը հրատարակվել է **ԼՂՀ ԿՄՍ նախարարության կոլեգիայի 2003թ. նոյեմբերի 4-ի թիվ 01-625 որոշմամբ և ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի, բանասիրական ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:** Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004, 352 էջ, 22 մամուլ:

2. Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները (պատմաբանասիրական քննական տեսություն), մենագրություն: Տպագրվել է **ԼՂՀ պետպատվերով:** Հրատարակվել է **ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի որոշմամբ:** Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, տպագրվել է «Դիզակ Պյուս» հրատարակչությունում, 2014, 80 էջ, 5 մամուլ:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Հ Ո Ղ Կ Ա Շ Ն Ե Ր

3. Ղարաբաղի թեման Րաֆֆու «Խամսայի մելիքություններում», ԼՂՀ Կրթության և Գիտության նախարարություն, ԱրՊՀ, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված՝ «Գիտության և մշակույթի հիմնահարցերն Արցախում» հանրապետական գիտաժողովի նյութերը, Ստեփանակերտ, 2000, էջ 93-94:

4. Ռեալական ուսումնարանը և հայագիտության մեծ երախտավոր Մանուկ Աբեղյանը, Շուշիի ռեալական ուսումնարանի հիմնադրման 120-ամյակին նվիրված Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2001, էջ 34-36:

5. Արցախը XIX դարի գրականության մեջ. Պլատոն Զուբովի «Անդրկովկասյան պատմական վեպ»-ի կերպարների համակարգի զուգորդումներում, ԱրՊՀ, Գիտական տեղեկագիր, 1-2 (6-7), Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2003, էջ 130 -133:

6. «Գաղտնիք Ղարաբաղի»... Պատմական ուսումնասիրություն, թե..., Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Ստեփանակերտ, «Դիզակ Պյուս» տպարան, 2007, էջ 127-142:

7. Պատմաբանասիրական քննություն «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության շուրջ, ԱրՊՀ, Գիտական տեղեկագիր, թիվ 1, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2008, էջ 91-94:

8. Գրական Ղարաբաղը Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրության մեջ, ԼՂՀ, Կրթության և գիտության նախարարություն, Արցախի պետական համալսարան: Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ I: Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009, էջ 40-42:

9. Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(8), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2010, էջ 106 -118:

10. Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմությունը և նրա գաղափարական ուղղվածությունը, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2(9), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2010, էջ 146 -163:

11. «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական արժեքավոր ուսումնասիրության հեղինակների՝ Աբրահամ և Ապրես Բեկնազարյանների գործունեությունը Պարսկաստանում, Միջազգային I գիտաժողովի նյութեր, ՀՀ ԿԳ նախարարություն, Հովի. Թումանյանի անվան Վանաձորի Պետական Մանկավարժական ինստիտուտ, Վանաձոր, «ՍԻՄ» տպագրատուն, 2011, էջ 90 -96:

12. Հողային իրավունքը Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրության մեջ, Օրենք և իրականություն, Միջազգային իրավաբանական գիտական հանդես, թիվ 9 (191), Երևան, «Իրավունք» հրատարակչություն, 2011, էջ 14-16:

13. Մեծ սուրգունը ըստ Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատության, Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյն Էջմիածնի, թիվ Ե, մայիս, 2011, էջ 101-106:

14. Աղա Մոհամմեդ շահը և Ղարաբաղի ինքնիշխանության վերականգնման գաղափարը, Իրան-Նամե, Արևելագիտական հանդես, հ. 42-43, Երևան, 2010-2011, էջ 114-115:

15. Մակար Բարխուդարյանը և Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ճակատագիրը, Բագին, Լիբանան, Բեյրութ, Հրատարակություն՝ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 2011, ԽԹ.տարի, թիւ 4, էջ 57-61:

16. Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն որպես պատմական արժեքավոր աղբյուր, ՀՀ ԿԳ նախարարություն, Գորիսի Պետական համալսարանի Միջազգային II գիտաժողովի աշխատանքների ժողովածու, Երևան, «Ձանգակ-97» հրատարակչություն, 2011, էջ 356-361, 6 էջ:

17. Լեոյի «Վէ՛պ թէ պատմութիւն» քննախոսությունը, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(50), «Ինտերլինգվա» լեզվաբանական համալսարան, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2012, էջ 22-27

18. Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ն ժամանակի հոլովություն (XIX-XXI դդ.), «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը», Միջազգային գիտաժողով, նյութերի ժողովածու, Երևան-Ստեփանակերտ, ՀՀ ԳԱԱ, ՀՀ Մշակույթի նախարարություն, «Պատմամշակութային արգելանց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն», ՊՈԱԿ, ԵՊՀ, ԱրՊՀ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 73 -74:

19. Մուրացանի «Ռուզան» դրամայի քննամիտումները և նրա վերարժևորման հարցը, ԱրՊՀ գիտարան տեղեկագիր, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2013, էջ 193 -208:

20. 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրության մեջ, ԱրՊՀ-ի գիտական տեղեկագիր, JSS N1829- 4383, Հասարակական գիտություններ, պրակ I, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2014, էջ 49 -54:

21. Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհու» խորհուրդը, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Լրատու, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատարակչություն, 2015, էջ 254 -261:

22. Շուշիի՝ «Արվեստների օագիսի» (Մ. Շահինյան) գեղարվեստական կերպավորումը Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհիում», «Արդի բանասիրության հիմնախնդիրները», Միջազգային գիտաժողովի ժողովածու, Հոլի. Թունանյանի անվան Վանաձորի Պետական համալսարան, Երևան, «Վարդան Մկրտչյան Ֆեոդորի» ԱՁ, 2015, էջ 268-276:

23. Մակար Բարխուդարյանի արցախապատումը, Կանթեղ, Գիտական հոդվածներ, թիվ 4(65), ՀՀ ԳԱԱ, Արվեստի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2015, էջ 17-27:

24. Раффи «Меликства Хамсы» и судьба Арцаха (Raffi's «Melikates of Khamsa» and the Fate of Artsakh), Proceedings of the XVII International Academic Congress “History, Problems and Prospects of Development of Modern Civilization”(Japan, Tokyo, 25-27 January 2016). Volume II, “Tokyo University Press”, 2016. - 943 p., p. 667-671.

25. “Тайна Карабаха” Апреса Бекназаряна и русско-персидская война 1826-1828 гг. (A. Beknazaryan's “Mystery of Karabakh” and Russian-Persian War of 1826-1828), Proceedings of the XVII International Academic Congress “History, Problems and Prospects of Development of Modern Civilization”(Japan, Tokyo, 25-27 January 2016). Volume II, “Tokyo University Press”, 2016. - 943 p.,p. 672 – 677.

Балаян Зинаида Ваниевна

Тема Арцаха в армянской литературе 19-ого века

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10. 01.01 –“Армянская классическая литература”.

Защита состоится в **03 июня** 2016 года, в **13³⁰ часов** на заседании специализированного совета **003** Армянской и зарубежной литературы, действующего в Институте литературы имени М. Абегамян НАН РА. Адрес: г. Ереван, ул. Г. Лусаворич, 15

РЕЗЮМЕ

Несмотря на то, что Арцах как историко-географический субъект в армянской культуре и литературе существовал со средневековья, по-новому изобретается в 19-ом веке.

Предмет исследования работы - история армянской литературы 19 века, в частности литературы об Арцахе.

Параллельно с существующим опытом армяноведения и арцаховедения представленная работа в своем роде в целом является **первым научным шагом**.

Так как в истории армянской литературы тема Арцаха, как тема не рассматривалась, то есть по данному принципу не проводились исследования, то материал исследуемый в данной работе, имеет **актуальное звучание** своей практической значимостью, одновременно превращаясь в **научную новизну**.

Аспекты, охватываемые темой достаточно широки и почти бесконечны, поэтому мы предпочли осветить те ключевые памятники, которые с большей глубиной представляют историю Арцаха и ее природно-географическую картину.

В культуре Арцаха 19-го века по своей жанровости программной ориентированности, остроте, освещению разнообразных вопросов, занимает особое место литература, которая включает в себя создание произведений, отражающих тематические различия, слои, идеологии национального освободительного движения, просвещения села и крестьянства, образования, представлением Шуши как культурного, просветительского центра.

Литературные традиции прошлого продолжились, обретая новое дыхание и значение, открывая новые литературные имена с новой национальной идеей содержания, тематики и развития: Раффи, Мурацана, А. Бекназарян, Лео, Айкуни, М. Бархударян.

В данном научном исследовании на фоне армянской литературы 19-го века впервые мы попытались представить литературу Арцаха как **отдельное рассматриваемое явление**.

Оно имеет свои самобытные традиционные черты, литературно-исторические, духовные и мирских культур и искусства.

В сферах литературы, истории и культуры были созданы также такие ценности, которые по каким-то причинам были отвергнуты, и сейчас дают повод для более глубокого изучения и переоценки.

Этот шаг, бесспорно должен быть сделан, чтобы окинуть новый взгляд на принципы литературоведения, его подходы, существующие стандарты, которые препятствовали и препятствуют правильной и независимой научной оценке культурных ценностей.

Мы попытались заново **оценить и переоценить** литературу Арцаха 19-го века, произведения, которые были неправильно или частично прокомментированы.

В четырех главах исследования представлены задокументированные драматически пробелы истории арцахармянства, в частности политическая судьба и запросы, роль Меликств Хамсы, свободолюбивые намерения арцахского армянства, национальное освободительное движение, их борьба, политические ориентиры, частные и общие выгоды.

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя политическую жизнь Меликств Хамсы 18-19 веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения острую картину самоуправления, а так же освободительное движение арцахства, находящиеся под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение, Шуши как "оазиса искусств" в Закавказье, представляя картину культуры, литературной богатой жизни Арцаха.

Мы довели до завершения научное исследование, используя **сопоставительные, критические источники, герменевтические и аксиологические, структурные методы, подчеркивая типические особенности и стилистические вопросы** исследуемого материала.

Комментарии выполнены согласно литературоведческих параллельных исследований того периода.

Во время анализа представленных произведений первичными являлись принципы **типичности, профессиональной оценки конкретного анализа, вида и содержания, истории, литературы, искусства и философии**.

Выявлены типичные особенности, которые указывают на обобщающую тему Арцаха, где раскрываются закономерности развития письменности, литературы и культуры, их самобытные и плодотворные проявления.

Научная работа состоит из **введения, четырех глав**, из которых **третья** состоит из **двух частей, заключения, списка использованной и котируемой литературы и приложений**.

Во **введении** представлены те **научные основы**, которые нашли свое **отражение и анализ** в **четырёх главах** исследования.

Так как представленные в диссертации летописи Платона Зубова, Мурацана, Раффи, А. Бекназаряна, Айкуни, М. Бархударяна, Лео включают в себя 18-19 века, то учитывая разность авторских индивидуальных стилей, на страницах нашего анализа мы раскрываем описание страны Арцах, политические, исторические, географические начертания Меликства Хамсы, описание жизни духовной монархии, правовой, земной, культурной и военной в присущих красках, которые представляет также свои уроки с точки зрения современной политической жизни арцахского армянства в настоящем и будущем в решении политических вопросов.

Параллельно показана тема Арцаха, его появление в армянской литературе 19-го века, его историко-художественная картина, которая своей практической значимостью получает **актуальное звучание**, вносит новые пласты, освещает поучительные стороны истории Арцаха, наличие крепкой опоры исследования и документальности **научной основы**.

Наша **цель и задача** показать все это в политическом, историко-художественном поле, подчеркивая как те представленные в материале многочисленные новинки, так и **актуальность** и **особую роль** и **значимость** представленных для **переоценки** произведений, поучительные уроки политической жизни арцахского армянства.

Исследования представленных в диссертации произведений получают особое значение благодаря комплексному изображению жизни арцахского армянства, исключительности уроков прошлого и раскрытия поучительных сторон, что обуславливает исключительность задач представленных нами произведений, многогранность времени, литературных направлений, многочисленности индивидуальных стилей и их интересную окраску, особенности авторов критикуемых произведений и их точки зрения связанные с олицетворением политической жизни Арцаха.

Первая глава исследования называется **“Первый Арцахский роман” (Платон Зубов “Карабахский астролог”)**.

Первая глава посвящена критике книги Платона Зубова “Карабахский астролог”, который в 1882г. Раффи перевел с русского на армянский и написал маленькое предисловие под названием “Переводчик”.

Будучи первыми в армяноведении и русистике мы попытались проанализировать и представить переоценке Платона Зубова как писателя, исследователя, предоставляя обширные исторические и литературные ссылки. Мы издали его под общим названием “Арцах в истории армянской литературы 19 –го века” - как первую часть критического исследования.

В структуре диссертации особый раздел посвящен роману Платона Зубова “Карабахский астролог” не только по причине того, что это первый арцахский роман, где впервые показана художественность ее идеологии, но и по тому, что в нем точно представлены быт и нравы Арцаха, политические события того времени.

Представлена и четко описана **актуальность, практическая значимость и научная новизна** книги Платона Зубова.

Мы подвергли историко-филологическому анализу книгу Платона Зубова “Карабахский астролог” с критическими параллелями, раскрывая **задачи исследования, стиль времени (того периода) и индивидуальный стиль**, подвергая **практическому обобщению** историческую самобытность жанра, систему образов, идей, сюжета, содержания, типические особенности, представленные Зубовым задачи и цели, гармонию исторических реалий, перехода литературных школ от классического к романтизму.

В диссертации **комментируются и переоцениваются** историческое эссе Раффи “Меликства Хамсы”, историческое исследование “Тайна Карабаха” Апреся Бекназаряна, работа Макара Бархударяна “Арцах”, которые представлены во **второй, третьей и четвертой** главах исследования.

В научном исследовании представлены мотивы авторов, проделанные работы в этом направлении: извлечение добывания источников и сбор по крупницам эпизодов драматической истории Арцаха и принципы описания их.

Вторая глава работы посвящена **историческому исследованию Раффи “Меликства Хамсы”**, которое получило оценку со стороны С. Сариняна, А. Магальяна и других. Литературная критика того времени раскритиковала очень сократив ценные стороны книги, помешав его полной печати. По этому поводу с рецензией выступил А. Арпиарян. Мы полностью исследовали, представляя основную направленность данной работы Раффи и отмечая политические причины распада Меликст Хамсы, используя систему революции.

Третья глава работы состоит из двух частей.

В **первой части** представлены мнения по поводу нашумевшего литературного исследования 19-го века “Тайна Карабаха” А. Бекназаряна, в связи с которым были напечатаны в периодической печати как положительные, так и отрицательные рецензии, после чего были изданы “Тайна Карабаха” Раффи, книги Лео “История или роман”, “Критика критиков” М. Бархударяна, “Путевые заметки” Айкуни, где говорится также об Абрааме и Апреся Бекназарянах и о вышедшем в 1886 году в Санкт-Петербурге под их авторством книге “Тайна Карабаха”, об его ценности, Автор считает его “бесценной исторической находкой”, сюжет и идея которого показывают тяжелые политические события в Карабахе 18-19 веков. Несмотря на это произведение было полностью отвергнуто.

Вторая часть третьей главы “Арцахопечатание Макара Бархударяна” представляет собой произведение М. Бархударяна об археологии и географии Арцаха, его истории, в частности историко-научный, географический, церковный, экономический ценности произведения “Арцах”, многостороннему анализу которого впервые обратились мы, подчеркивая и приводя документы и сведения, заново представляя труд большого ученого в новом свете.

Четвертая глава исследования **“Тайна Карабаха” в историко-филологическом аспекте** представляет нашумевшую книгу армянской литературы 19-го века, с многосторонним анализом того времени и освещением системы персонажей. Исследуется параллельно с авторским описанием, которые проливают уникальный свет на вопрос.

Впервые через **130 лет** книгу **А. Бекназаряна “Тайна Карабаха”** мы попытались переоценить, проанализировать исторических источников, стараясь раскрыть рациональное зерно, посеянное в нем. Поэтому мы и отдаем предпочтение **научной новизне, актуальной значимости и практической ценности** работы, представляя “Тайну Карабаха” историческое произведение, достойное переоценке.

Были перекрещены, проведены параллели и переплетены границы истории и философии, литературы, критики и полемики.

Представление данной научной работы становится крайне необходимой для переоценки закрытых страниц арцаховедения и армяноведения.

Впервые мы ставим вопрос о переоценке закрытой страницы армянской литературы представив анализ всех источников армяноведения.

В общем контексте армянской литературы впервые исследуется тема Арцаха и отображение Арцаха, в связи с ее **научной ценностью и научной новизной** приобретают **актуальное звучание**.

Представленные исследованием **задачи, цели, гипотезы** предоставлены **обосновано**, они выявляют интересные пласты для **оценки и переоценки**, что **научно доказуемо, практическая и теоретическая значимость описаны**.

Первоочередной задачей представленного исследования **“Арцах в армянской литературе 19-го века”** является сделать **научной** его **систему оценки**, в идеологии историко-филологической мысли арцаховедения.

В свете представленных аспектов материал во всех главах является **новизной**, которая исследуется **ассоциативно и доводится до конца**, руководствуясь **научно-литературными герменевтическими, аксиологическими, источниковыми, историко-филологическими, структурными, аналитическими и переоценочными методами**.

Balayan V. Zinaida

Artsakh in the Armenian Literature of the 19th century

Dissertation to obtain the degree of Doctor of Philology in Speciality **10. 01.01** - "Armenian Classic Literature". The defense will take place on **03 june** 2016, at **13. 30** at the specialized Council **003** of "Armenian and Foreign Literature" at the Institute of Literature of the National Academy of Science after M. Abeghyan.

Address: 15 Grigor Lusavorich, Yerevan

Summary

Albeit Artsakh as a geohistorical entity in Armenian culture and literature existed from the Medieval Ages, it acquired a new interpretation in the 19th century.

The subject of the study is the history of Armenian Literature of the 19th century, namely the literature on Artsakh.

This study of Artsakh Literature is a pioneering attempt in Armenological literature, which determines the actuality and scientific novelty of the study.

Since the scope of the topic is wide, we have focused on the pieces which give a thorough picture of Artsakh History and Geography.

In the 19th century Literature of Artsakh occupied a special place in the culture of Artsakh, since it reflected the national liberation movements and different ideologies, which aimed at elimination of ignorance and illiteracy and which were centered in Shoushi, the cultural and educational center of the region.

The literary traditions were continued with another spirit that brought force new names - Raffi, Mouratsan, A. Beknazaryan, Leo, Hajkouni, M. Barkhudaryan, carriers of national ideology.

The **object of study** is Artsakh Literature, its unique way of reflecting culture and art, also those values of History, Literature and Culture, which were neglected. Therefore the study aims at destroying stereotypes which hinder proper appreciation of the values. It aims at reevaluation of Artsakh Literature of the 19th century and interpretation of partly known or unknown pieces.

The four chapters present the dramatic events of Artsakh history-political situation, the role of Khamsa Melikdoms, the spirit of liberty of Artsakh people, their struggle, political orientation, personal and public benefits.

The study covers the political life of Khamsa Melikdoms, the relations of Artsakh with neighboring states, its internal situation, loss of self-government, struggle against Persians and unification with Russia, political stance, educational movement, cultural and literary activity in the 18-19th centuries.

The study was carried out by the application of comparative, synthetic, hermeneutic, axiological and structural methods. The analysis focused on typological method that helped to disclose the characteristics of literature, education, history and culture.

The analysis was properly described and interpreted.

The study consists of an introduction, four chapters, each of which has two parts, a conclusion and a bibliography.

The introduction presents the choice of topic, the object of study, the practical value of the work. The analysis of works by P. Zoubov, Mouratsan, Raffi, A. Beknazaryan, Haykouni, M. Barkhudaryan and Leo in the 18-19th centuries, which reveal the political situation of Khamsa Melikdoms, geographical situation of Artsakh, the spiritual power of the region, also juridical, cultural and military situation.

The revelation of the theme of Artsakh in Armenian Literature of the 19th century, its historical and literary description has practical importance, since it points to the solid documentary base of the study.

Our aim is to show that Artsakh Literature has valuable documentary evidence and valuable literary pieces related to historical and political life of the region.

The first chapter is devoted to the analysis of "Karabagh Astrologer" by Platon Zoubov, published in 1834. Raffi wrote an introduction to it and translated the whole piece from Russian into Armenian. In this work P. Zoubov is analyzed and evaluated in Armenological and Russian studies for the first time. It is published under the title "Artsakh in Literature and Culture in the 19th century".

Zoubov's work is valuable not only because it is the first historical novel about Artsakh, but also since it depicts life and manners of Artsakh and the political life of that period.

The study depicts the actuality, practical value and scientific value of P. Zoubov.

The critical historical and linguistic analysis of P. Zoubov's "Karabagh Astrologer" reveals the individual style of the period, it also generalizes distinctive features of the genre, the system of images, ideas, the plot, the passage from classicism to romantism.

The dissertation reevaluates and comments on "Khamsa's melikdoms" by Raffi, the historical study "Mystery of Karabagh" by A. Beknazaryan, "Artsakh" by M. Barkhudaryan, which are presented in the second, third and fourth chapters.

The scientific study reflects the motives of these works and the reason of collecting the episodes of Artsakh nugget after nugget.

The third chapter, entitled "The Historical Fate of Melikdoms, is devoted to the historical study of Raffi's "Melikdoms of Khamsa" which was partly appreciated by S. Sarinyan, A. Maghalyan and some others. The literary criticism of the period has cut out parts of the book, preventing publishing the whole book, as stated by A. Arpiaryan. The study was newly analyzed by Raffi as regards the ideological orientation of the book and the political causes of decline of melikdoms of Khamsa.

The third chapter of the book consists of two parts: 1. Origin of the legend and its literary resonance. 2. M. Barkhudaryan's "Artsakh".

The first part reflects the renown study of positive and negative reviews and feedbacks on A. Beknazaryan's "Mystery of Karabagh", released in periodicals. This was followed by "Mystery of Karabagh" by Raffi, "A History or a Novel" by Leo, "Criticism of the Critics" by M. Barkhudaryan, "Travelogue" by Haykouni, which comments on Abraam and Apres Beknazaryans and the value of their co-authored book "Mysteries of Karabagh". The authors consider it "a precious historical finding". It presents the harsh political events of the Karabagh of the 18-19th centuries. In spite of that the play was not accepted.

The second part of the **third chapter** on Makar Barkhudaryan's "Artsakh" covers the historical-scientific, geographic, religious, economical aspects of the life of the region. The present study is a pioneering work which analyses and brings to the fore evidence of that multi-faceted and encompassing analysis.

The **fourth chapter** of the study - "Mystery of Karabagh" in the historical-linguistic perspective, presents the renown book of the Armenian Literature of the 19th century, presenting a comprehensive analysis and thorough coverage of the literary images and presenting a new perspective on the problem.

A. Beknazaryan's "Mystery of Karabagh" is reevaluated, analyzed from typological and historical-structural perspective for the first time in 130 years. Thus we consider it important to reveal the rational reasoning behind it. This conditions the **scientific novelty, actuality and practical value** of "Mystery of Karabagh", which is worth being reevaluated. Literature, Philosophy, Criticism, Polemics and History are interwoven in the work.

The necessity to interpret and reevaluate hidden pages of Armenology and Artsakhology condition the **actuality** of this academic work. Analysis of all the sources of Armenology helps to disclose hidden pages of Artsakh.

The topic of Artsakh is analyzed against the background of Armenian Literature, conditioning its **academic value** and **scientific novelty** of the paper. The presented tasks, objectives, hypothesis of the study are grounded and may be evaluated and reevaluated.

In this perspectives all chapters are thoroughly analyzed. They present academic **novelty** based on hermeneutic, axiological, historical-linguistic, structural, analytical, reevaluative methods.